

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

20 ապրիլի 2022թ.

N	Հաշվետվության բովանդակությունը	Էջը
1	Ընդհանուր տեղեկություններ ստուգումների վերաբերյալ	1
2	Ստուգումների արդյունքները՝ ըստ ստուգաթերթերի	10
3	Խախտումների բնույթները՝ ըստ ստուգումների արդյունքում կազմված ակտերի և լիազոր մարմինների ղեկավարներին ներկայացված գրությունների	17
4	Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները և բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ստուգված դպրոցների	29
5	Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների վերաբերյալ	32
6	Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների և 1-ին եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքների վերաբերյալ	34
7	Տեղեկատվություն ստուգումների արդյունքում արձանագրված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ	37
8	Անփոփում	48

**1. Ընդհանուր տեղեկություններ ստուգումների վերաբերյալ**

Ղեկավարվելով Ոչայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին՝ ՀՀ օրենքով, Ուորմատիվ իրավական ակտերի մասին՝ ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով և ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կանոնադրության 10-րդ կետի 1-ին և 18-րդ կետի 7-րդ ենթակետերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1139-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի ստուգաթերթերը, տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ի կատարումն տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան հրամանների՝ **2022 թվականի 1-ին եռամսյակում 38** հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ դպրոց) իրականացվել են ստուգումներ:

Հաշվետվությունում ներկայացված են **31** դպրոցների ստուգման արդյունքները, քանի որ **7** դպրոցների ստուգման արդյունքներն ամփոփման փուլում են և կներկայացվեն 2-րդ եռամսյակում (Հրազդանի հ. 13 ավագ, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի հ. 11, Գառնիի հ. 1 հիմնական, Քասախի հ. 2, Նոր Արտամետի, ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի, Մալիշկայի միջնակարգ դպրոցներ):

Ստուգումներն իրականացվել են **դպրոցներում** կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության ապահովման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, տվյալների բազա ձևավորելու նպատակով:

Ստուգման ընթացքում ապահովվել է աշխատանքի կազմակերպման սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պատշաճ կատարումը:

**2022 թվականին** ստուգումներն իրականացվում են **11** ստուգաթերթերով, որոնք, ըստ բովանդակության, ներկայացված են Աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1*

<i>Հ/Հ</i>	<i>Ստուգաթերթի NN</i>	<i>Ստուգաթերթի բովանդակություն</i>
<i>1</i>	<i>N 01</i>	<i>Կրթության կազմակերպում</i>
<i>2</i>	<i>N 02</i>	<i>Ուսուցչի պարտականություններ</i>
<i>3</i>	<i>N 03 (1-55 հարցեր)</i>	<i>Տնօրենին ներկայացվող պահանջներ</i>
<i>4</i>	<i>N 04</i>	<i>Տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականություններ</i>
<i>5</i>	<i>N 05</i>	<i>Մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիր</i>
<i>6</i>	<i>N 07</i>	<i>Խորհրդակցական մարմիններ</i>
<i>7</i>	<i>N 08</i>	<i>Ուսուցչի թափուր տեղի մրցույթ</i>
<i>8</i>	<i>N 11</i>	<i>Դպրոց սովորողի ընդգրկում, տեղափոխում, ազատում</i>
<i>9</i>	<i>N 12</i>	<i>Սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրում, սվարտում</i>
<i>10</i>	<i>N 14</i>	<i>Վճարովի ծառայություններ</i>
<i>11</i>	<i>N 15</i>	<i>Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում</i>

**2022 թվականի 1-ին եռամսյակում** ստուգումներ իրականացվել են ներքոնշյալ **ՀՀ 31** դպրոցներում.

- **Երևանում գործող 18 դպրոցներում**. Երևանի հ.հ. 6, 7, 8, 18, 26, 27, 39, 78, 89, 128, 161 հիմնական, հ. 175 միջնակարգ, հ.հ. 54, 83, 105 ավագ, «Երևանի Ռուբեն Սարգսյանի «Էլիտա» հեղինակային ոչ պետական միջնակարգ դպրոց» ՍՊԸ (այսուհետ՝ «Էլիտա» միջնակարգ դպրոց), «Ռոբերտ Ազարյան» ՍՊԸ (այսուհետ՝ Ռ.Ազարյանի միջնակարգ դպրոց), «Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսա-իրավագիտական համալսարան» ՍՊԸ ԱրտՍՏԵՄ վարժարան (այսուհետ՝ ԱրտՍՏԵՄ վարժարան),

- **ՀՀ Արարատի մարզի 8 դպրոցներում**. Արևաբույրի, Այգեստանի, Այգավանի, Եղեգնավանի, Լուսառատի, Հովտաշատի, Հայանիստի, Տափերականի միջնակարգ դպրոցներ,

- **ՀՀ Արմավիրի մարզի 5 դպրոցներում.** Արևաշատի, Արգավանդի, Ալաշկերտի, Ջրարբիի, Հայկաշենի միջնակարգ դպրոցներ:

Ստուգված **31** դպրոցներից **11-ը** հիմնական են, **16-ը`** միջնակարգ, **3-ը`** ավագ, **1-ը`** վարժարան:

Յուրաքանչյուր դպրոցի համար ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել **ներքոնշյալ ժամանակահատվածից մինչև տվյալ դպրոցում** ստուգումը սկսելու օրը.

- **2019 թվականի հունվարի 8-ից.**

Երևանի հ.հ. 6, 18, 78, 89, 128, 161 հիմնական, հ. 175 միջնակարգ, հ.հ. 54, 83, 105 ավագ, Այգեստանի, Լուսառատի, Հայանիստի, Այգավանի, Տափերականի, Արևաբույրի, Հովտաշատի, Եղեգնավանի, Արգավանդի, Արևաշատի, Ալաշկերտի, Ռ. Ազարյանի, «Էլիտա» միջնակարգ դպրոցներ, ԱրտՄՏԵՄ վարժարան,

- **2019 թվականի հոկտեմբերի 10-ից.**

Ջրարբիի միջնակարգ դպրոց,

- **2019 թվականի հոկտեմբերի 30-ից.**

Հայկաշենի միջնակարգ դպրոց,

- **2019 թվականի նոյեմբերի 18-ից.**

Երևանի հ. 7 հիմնական դպրոց,

- **2019 թվականի դեկտեմբերի 2-ից.**

Երևանի հ. 27 հիմնական դպրոց,

- **2019 թվականի դեկտեմբերի 9-ից.**

Երևանի հ.հ. 26, 39 հիմնական դպրոցներ:

Ստուգված **բոլոր 31 (100%)** դպրոցներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է **31** ակտ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների` դպրոցների տնօրեններին, «Էլիտա» միջնակարգ դպրոցի գործադիր, ԱրտՄՏԵՄ վարժարանի և Ռ.Ազարյանի միջնակարգ դպրոցի հիմնադիր և գործադիր տնօրեններին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները, իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին (այսուհետ` ՀՀ ԿԳՄՍ նախարարին) Երևանի քաղաքապետին (այսուհետ` քաղաքապետ), «Էլիտա» միջնակարգ դպրոցի հիմնադիր տնօրենին, ՀՀ Արարատի, Արմավիրի մարզպետներին` ակտերի պատճենները:

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ **16** դպրոցների (**52%**) կանոնադրություններում չեն ներառվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունները, իսկ **2** դպրոցներում` իրականացվող հանրակրթական ծրագրերի ամրագրումը:

Վերոնշյալի մասին գրություններով տեղեկացվել են համապատասխան (ըստ ենթակայության) լիազորված մարմինների ղեկավարները, հիմնադիրը, հիմնադիր և գործադիր տնօրենները. կանոնադրությունների փոփոխություն` Երևանի հ.հ. 6, 7, 8, 18, 26, 27, 39, 78, 89, 128, 161 հիմնական, հ. 175 միջնակարգ, հ.հ. 54, 83, 105 ավագ, «Էլիտա»

միջնակարգ դպրոցներ, ծրագրերի ամրագրում՝ Երևանի հ. 26 հիմնական և Ռ. Ագարյանի միջնակարգ դպրոցներ:

Համապատասխան գրություններով **ՀՀ ԿԳՄՍ նախարարին** տեղեկացվել է **նաև, որ.**

**Երևանի հ. 8 հիմնական դպրոցում** «Ասորերեն լեզու» առարկան դասավանդող ուսուցիչները չունեն համապատասխան որակավորում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում չկան ասորերենի (որոշ դպրոցներում՝ եզդիերենի) մանկավարժական որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Առաջարկվել է՝ քննարկել ասորերեն (եզդիերեն) դասավանդողներին ներկայացվող պահանջները վերանայելու կամ համապատասխան մոդուլներով կամ վերապատրաստման միջոցով տվյալ լեզվի իմացության կրեդիտներ ձեռք բերելու հարցը (օրինակ՝ «Շախմատ» և «Ազգային երգ ու պար» առարկաների դասավանդման անալոգիայով (համանմանությամբ))՝ ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի ուսուցման շարունակականությունն ապահովելու նպատակով:

**ԱրտՄՏԵՄ վարժարանում** որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ աշխատանքի ընդունված անձի որակավորումը չի համապատասխանում «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9.1. մասի պահանջին. *«Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է»:*

**Ռ. Ագարյանի միջնակարգ դպրոցում** որպես կերպարվեստի, տեխնոլոգիայի, ֆիզկուլտուրայի, պատմության, մաթեմատիկայի, ռուսաց լեզվի ուսուցիչներ աշխատանքի ընդունված 6 անձանց որակավորումները չեն համապատասխանում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին. *«Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ»:*

**ՀՀ Արարատի մարզպետին.**

**Լուսառատի միջնակարգ դպրոցի** 7-րդ դասարան ընդունված սովորողի համար, որն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ հուզականային ոլորտի խանգարումներով, սահմանված կարգով չի իրականացվել սովորողի կրթության կազմակերպումը:

**Հիմնադիր տնօրենին.**

**«Էլիտա» միջնակարգ դպրոցի** ուսումնական արձակուրդների փոփոխություններն անհրաժեշտ է կատարել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հուլիսի 20-ի N 54-Ն հրամանով հաստատված ՈՀանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները՝ Հավելվածի 1-ին գլխի 10-րդ կետի պահանջներին համապատասխան. *«Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը»:*

ՀՀ ԿԳՄՍ նախարարին, քաղաքապետին, ՀՀ Արմավիրի և Արարատի մարզպետներին, «Էլիտա» միջնակարգ դպրոցի հիմնադիր տնօրենին, ԱրտՄՏԵՄ վարժարանի և Ռ.Ազարյանի միջնակարգ դպրոցի հիմնադիր և գործադիր տնօրեններին առաջարկվել է՝

- քննարկել ստուգումների արդյունքները, ձեռնարկել համապատասխան միջոցներ,
- ապահովել համապատասխան փոփոխությունների, դպրոցի կանոնադրության մեջ ամրագրումն ու սահմանված կարգով հաստատումը,
- արդյունքների մասին տեղեկացնել տեսչական մարմնին:

Ստուգված 31 դպրոցների ստուգումների արդյունքների վերլուծությունը, ըստ ստուգաթերթերի, ունի հետևյալ պատկերը.

Բարձր ռիսկային է համարվել տնօրենին ներկայացվող պահանջների կատարման գործընթացը (**N 03 ստուգաթերթ**): Համեմատաբար ցածր ռիսկային է սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողների՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջների կատարմանն ուղղված գործընթացը (**N 12 ստուգաթերթ**): Ըստ ստուգաթերթի կշռային միավորի նկատմամբ միջինացված ռիսկային միավորի տոկոսի մեծության երկրորդ տեղում է օլիմպիադայի կազմակերպման և անցկացման (**N 15 ստուգաթերթ**) գործընթացը:

**Ամենաբարձր** ռիսկային միավոր գրանցվել է Արևաշատի միջնակարգ դպրոցում՝ **7,7 միավոր**, իսկ **ամենացածր** ռիսկային միավոր՝ Երևանի հ. 89 հիմնական դպրոցում և ԱրտՄՏԵՄ վարժարանում՝ **0,3 միավոր**:

Ստուգված 31 դպրոցներից **16-ը (51,6%) բարձր** ռիսկային, իսկ **15-ը (48,4%)՝ միջին** ռիսկային խմբերի դպրոցներ են:

2022 թվականի 1-ին եռամսյակում ստուգված (ամփոփված) դպրոցներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների **281** խախտումներ, որոնցից **28 (10%)** խախտումները նշվել են լիազոր մարմինների ղեկավարներին ուղղված գրություններում:

Ստուգումների արդյունքում արձանագրվել են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև կրթության ոլորտը կարգավորող **10** նորմատիվ իրավական ակտերի **92** պահանջների խախտումներ:

Խախտումների **25%-ը՝ 71 խախտում**, վերաբերել է **58** մանկավարժական աշխատողների նշանակմանը: Հարկ է նշել, որ մանկավարժական աշխատողների խախտումներ արձանագրվել են **23 (74%)** դպրոցներում:

Առավել մեծ թվով մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ արձանագրվել են Ջրարբիի միջնակարգ դպրոցում. **9 (16%)** մանկավարժական աշխատողների նշանակման **11 (15%)** խախտում:

Հայտնաբերված խախտումների հիմնական մասը վերաբերել է ուսուցչի նշանակմանը: Այսպես՝ **23** դպրոցներից **14-ում (61%)** արձանագրվել են ուսուցչի նշանակման **29 (41%)** խախտումներ, իսկ **11-ում (48%)՝** մինչև ուսուցչի թափուր տեղի մրցութային կարգով համալրվելը՝ **25 (35%)** խախտում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների թվի (%) վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը, կանոնադրության անհամապատասխանությանը և սովորողների համակազմի ձևավորմանը, որոնք արձանագրվել են համապատասխանաբար՝ **23 (74%), 17 (55%) և 14 (45%)** ստուգված դպրոցներում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ խախտումների թվի (%), վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **71 (25%)**, խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **33 (12%)**, սովորողների համակազմի ձևավորմանը՝ **30 (11%)** խախտում:

Ինչպես արդեն նշվել է՝ 2022 թվականի 1-ին եռամսյակում ստուգումներ իրականացվել են **Երևանի 18, ՀՀ Արարատի մարզի 8, ՀՀ Արմավիրի մարզի 5** դպրոցներում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ստուգված դպրոցների, ունեն հետևյալ պատկերը.

- ❖ կանոնադրության անհամապատասխանությանը վերաբերող բոլոր խախտումները բնորոշ են եղել միայն **Երևանի** դպրոցներին. **18** դպրոցներում՝ **100%**,

- ❖ մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներն առավելագույնը արձանագրվել են **ՀՀ Արարատի մարզի** ստուգված **բոլոր 8** դպրոցներում՝ **100%**,

- ❖ սովորողների համակազմի ձևավորմանը, ներքին գնահատման գործընթացին, ուսումնական պլանի պահանջներին, պաշտոնային պարտականությունների կատարմանը և վարչական աշխատողների ուսումնական բեռնվածությանը վերաբերող խախտումներն առավելագույնն արձանագրվել են **ՀՀ Արարատի մարզի** ստուգված դպրոցներում, համապատասխանաբար՝ **62,5%, 50%, 62,5%, 37,5%, 25%**,

- ❖ խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը, ինչպես նաև օլիմպիադայի գործընթացին վերաբերող խախտումներն առավելագույնն արձանագրվել են **ՀՀ Արմավիրի մարզի** ստուգված դպրոցներում, համապատասխանաբար՝ **60% և 40%**,

- ❖ **ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի** ստուգված դպրոցներում չեն արձանագրվել կանոնադրության անհամապատասխանությանը վերաբերող խախտումներ, իսկ **ՀՀ Արարատի մարզի դպրոցներում** նաև՝ օլիմպիադայի գործընթացի խախտումներ:

Ստուգումների արդյունքում արձանագրված **281** խախտումներից **172-ը** համարվել են ժամկետանց: Նրանց գերակշռող մասը, ըստ բնույթների, ներկայացված է ստորև.

- ❖ մանկավարժական աշխատողների նշանակում՝ **24%**,

- ❖ ներքին գնահատման գործընթաց և սովորողների համակազմի ձևավորում՝ **12-ական տոկոս,**

- ❖ ուսուցչի թափուր տեղի մրցույթի անցկացման ընթացակարգ՝ **10%**,

- ❖ ուսումնական պլանի պահանջներ՝ **8%:**

Խախտումների **61%-ը** (172 խախտում) համարվել են ժամկետանց, քանի որ այդ խախտումների հետևանքները վերացնել արդեն իսկ հնարավոր չէ՝ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին կամ խախտման հետևանքները վերացվել են ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում:

Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրագրերով **24 (77%)** դպրոցների տնօրեններին տրվել են **81 (29%)** հանձնարարականներ, որոնք կազմել են արձանագրված խախտումների **29%-ը**:

Առավել հաճախ կրկնվող հանձնարարականները հետևյալ բնույթի են.

- ❖ մանկավարժական աշխատողների նշանակում. **16 (67%)** դպրոցների՝ **29 (36%)**,
- ❖ ուսումնական պլանի պահանջների համապատասխանեցում. **7 (29%)** դպրոցների՝ **10 (12%)**,
- ❖ սովորողների համակազմի ձևավորում. **6 (25%)** դպրոցների՝ **10 (12%)**,
- ❖ խորհրդակցական մարմինների ձևավորում, գործունեության իրականացում. **7 (29%)** դպրոցների՝ **18 (22%)**,
- ❖ տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարում՝ **7 (29%)** դպրոցների՝ **14 (17%)** հանձնարարականներ:

Ստուգված 31 դպրոցների տվյալները՝ ըստ խախտումների և հանձնարարականների թվի, ներկայացված են Աղյուսակ 2-ում:

					<i>Աղյուսակ 2</i>
<i>Հ/Հ</i>	<i>Դպրոցի անվանում</i>	<i>Խախտումների թիվ</i>	<i>Ժամկետանց խախտումների թիվ</i>	<i>Հանձնարարականների թիվ</i>	<i>Լիազոր մարմնին ներկայացված խախտումների թիվ</i>
1	Երևանի հ. 6 հ/դ	10	8	1	1
2	Երևանի հ. 7 հ/դ	14	7	6	1
3	Երևանի հ. 8 հ/դ	12	3	7	2
4	Երևանի հ. 18 հ/դ	9	7	1	1
5	Երևանի հ. 26 հ/դ	6	1	3	2
6	Երևանի հ. 27 հ/դ	10	8	1	1
7	Երևանի հ. 39 հ/դ	3	2	0	1
8	Երևանի հ. 54 ա/դ	2	0	1	1
9	Երևանի հ. 78 հ/դ	15	12	2	1
10	Երևանի հ. 83 ա/դ	18	17	0	1
11	Երևանի հ. 89 հ/դ	2	0	1	1
12	Երևանի հ. 105 ա/դ	7	6	0	1
13	Երևանի հ. 128 հ/դ	6	0	5	1
14	Երևանի հ. 161 հ/դ	3	1	1	1
15	Երևանի հ. 175 մ/դ	4	3	0	1
16	«Էլիտա» մ/դ	38	26	11	1
17	Ռ. Ագարյանի մ/դ	13	3	2	8
18	ԱրտՄՏԵՄՎարժարան	4	3	0	1
19	Արևաշատի մ/դ	9	6	3	0
20	Արզավանդի մ/դ	4	4	0	0
21	Այաշկերտի մ/դ	8	1	7	0
22	Ջրարբիի մ/դ	17	12	5	0
23	Հարկաշենի մ/դ	17	16	1	0
24	Լուսառատի մ/դ	6	2	3	1
25	Հայանիստի մ/դ	7	5	2	0
26	Այգեստանի մ/դ	4	4	0	0

27	Տարիերականի մ/դ	7	3	4	0
28	Եղեգնականի մ/դ	13	4	9	0
29	Հովտաշատի մ/դ	3	2	1	0
30	Արևարույրի մ/դ	6	3	3	0
31	Այգավանի մ/դ	4	3	1	0
<b>Ընդամենը</b>		<b>281</b>	<b>172</b>	<b>81</b>	<b>28</b>

Աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ ստուգումների արդյունքում **առավել մեծ թվով**

*- խախտումներ*

արձանագրվել են «Էլիտա» միջնակարգ դպրոցում՝ **38 (14%)** խախտում,

*- ժամկետանց խախտումներ.*

«Էլիտա» միջնակարգ դպրոցում՝ **26 (15%),**


*- խախտումներ ներկայացվել են լիազոր մարմինն.*

Ռ. Ագարյանի միջնակարգ դպրոցի հիմնադիր և գործադիր տնօրենին՝ **8 (29%)** խախտում,

*- հանձնարարականներ*

տրվել են «Էլիտա» միջնակարգ դպրոցին՝ **11 (14%)** հանձնարարական:

Ստուգված 31 դպրոցների խախտումների և հանձնարարականների թվային համամասնությունը ներկայացվել է Գծապատկեր 1-ում.



**2021 թվականի 1-ին եռամսյակը,** որպես հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ, սահմանվել է **21** դպրոցների **59** հանձնարարականների համար:

**21** դպրոցներից **14-ի (67%)** կողմից կատարողականները ներկայացվել են սահմանված ժամկետում, **3-ի (14%)** դեպքում՝ սահմանված ժամկետից ուշ, իսկ **4 (19%)** դպրոցների դեպքում կատարողականներ չեն ներկայացվել (Երևանի հ.հ. 6, 18, Վանաձորի հ. 6 հիմնական և Ալավերդու հ. 9 միջնակարգ դպրոցներ):

Տրված 59 հանձնարարականներից 28-ը վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը, 7-ը՝ ուսումնական պլաններին, 28-ը՝ այլ բնույթի: Կատարողականների վերաբերյալ գրություններ չեն ստացվել տրված 6 հանձնարարականների դեպքում (4 դպրոցներ):

Ըստ դպրոցներից ստացված կատարողականների՝ 53 հանձնարարականներից կատարվել են 28-ը (53%), կատարվել են մասամբ՝ 20-ը (37%), չեն կատարվել 3-ը (6%), ինչպես նաև 2 (4%) հանձնարարականների կատարման մասին տեղեկատվություն չի ներկայացվել:

Մանկավարժական աշխատողների նշանակմանը վերաբերող 23 (53%) հանձնարարականները տրվել են 17 դպրոցներից 13-ին (76%): 23 հանձնարարականներից կատարվել են 7-ը (30%), ընթացքի մեջ են 13-ը (57%), չի կատարվել 1-ը (4%) և հանձնարարականի կատարման վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել 2 (9%) հանձնարարականների դեպքում:

Մանկավարժական աշխատողների նշանակման 23 հանձնարարականներից ուսուցչի նշանակմանը վերաբերում են 21-ը (91%), որից կատարվել են 6-ը (28%), ընթացքի մեջ են 12-ը (57%), չի կատարվել 1-ը (5%) և հանձնարարականի կատարման վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել 2 (10%) հանձնարարականների դեպքում:

Ելնելով ստուգումների արդյունքներից, ստուգված դպրոցներին տրված հանձնարարականների և 1-ին եռամսյակում ներկայացված հանձնարարականների կատարողականների վերլուծությունից հետևում է, որ գերակա խնդիրը շարունակում է մնալ մանկավարժական աշխատողների, հիմնականում՝ ուսուցիչների, սահմանված կարգի խախտումով նշանակումը:

Խնդիր է նաև այն հանգամանքը, որ տնօրենների ներկայացրած կատարողականներում հանձնարարականների մի մասի կատարումը դեռևս ընթացքի մեջ է: Տնօրենների զգալի մասը հետագայում լրացուցիչ չի ներկայացնում տեղեկատվություն հանձնարարականների վերջնական կատարման վերաբերյալ, որի հետևանքով մեծանում է տվյալ դպրոցի ռիսկը, իսկ խնդիրը վերջնական լուծում չի ստանում. մնում է անորոշ, թե որքանով են վերացվել խախտման հետևանքները, ինչը կարող է իր ազդեցությունն ունենալ կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության և ուսուցման որակի վրա:

## **2. Ստուգումների արդյունքները՝ ըստ ստուգաթերթերի**

Ստուգումների պատկերը՝ ըստ ստուգաթերթերի, այսպիսին է.

### ***N 01 ստուգաթերթ՝ Կրթության կազմակերպում. 12 դպրոցներում (38,7%)***

Առանց համապատասխան լիցենզիաների հանրակրթական ծրագրերի իրականացում, լիցենզիայով սահմանված համակազմի սահմանային տեղերի գերազանցում, կանոնադրության, ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի անհամապատասխանություններ և այլն:

### ***N 02 ստուգաթերթ՝ Ուսուցչի պարտականություններ. 5 դպրոցներում (16%)***

Ուսուցիչների կողմից կրթական ծրագրերի կատարում, ԿԱՊԿՈՒ սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջների ապահովում:

***N 03 ստուգաթերթ՝ Տնօրենին ներկայացվող պահանջներ.  
29 դպրոցներում (93,5%)***

Դպրոցի տարիֆիկացիայի և հաստիքացուցակի կազմում, ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, դասղեկների, մանկավարժների հաշվետվությունների հաստատում, ինչպես նաև, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի ընթացակարգի ապահովում, մանկավարժական կադրերի ընտրություն (նշանակում), ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատում, սովորողների համակազմի ձևավորում, ուսումնական ծանրաբեռնվածության, կրթության հաջորդականության ապահովում և այլն:

***N 04 ստուգաթերթ՝ Տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականություններ. 12 դպրոցներում (38,7%)***

Ուսումնական ծրագրերի կատարում, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության համապատասխանեցում, ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմում, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի որակավորումների պահանջների համապատասխանություն և այլն:

***N 05 ստուգաթերթ՝ Մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրեր. 7 դպրոցներում (22,6%)***

Հատուկ մանկավարժի պարտականությունների կատարում, ՆԶՊ-ի ուսուցչի և գրադարանավարի որակավորումների պահանջների անհամապատասխանություն:

***N 07 ստուգաթերթ՝ Խորհրդակցական մարմիններ. 11 դպրոցներում (35,5%)***

Մանկավարժական խորհրդի, մեթոդական միավորումների, աշակերտական և ծնողական խորհուրդների ձևավորում և (կամ) գործունեություն:

***N 08 ստուգաթերթ՝ Ուսուցչի թափուր տեղի մրցույթ 13 դպրոցներում (41,9%)***

Թափուր տեղ առաջանալու դեպքում դասաժամերի տրամադրում, մրցույթի հայտարարման ժամկետ, մրցութային հանձնաժողովի ձևավորում և այլն:

***N 11 ստուգաթերթ՝ Դպրոց սովորողի ընդգրկում, տեղափոխում, ազատում. 5 դպրոցներում (16%)***

Սովորողների սահմանված ժամկետից ուշ ընդունելություն, այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և ՀՀ վերադարձած սովորողի դասարանի որոշման գործընթաց (սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին մասնագիտական խմբի գրավոր եզրակացություն, բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար

անհատական առարկայական պլանների, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի առկայություն և այլն):

***N 12 ստուգաթերթ՝ Սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրում, ավարտում. 1 դպրոցում (3%)***

Դպրոցների 10-րդ և 11-րդ դասարաններում փոխադրական քննությունների անցկացման ժամկետներ:


***N 14 ստուգաթերթ՝ Վճարովի ծառայություններ.***

Ստուգված դպրոցներում վճարովի ծառայություններ չեն իրականացվել:

***N 15 ստուգաթերթ՝ Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում. 8 դպրոցներում (25,8%)***

Դպրոցական օլիմպիադայի կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների ձևավորում, ժամկետների պահպանում, գործընթացի կազմակերպում, վերահսկում, հաղթողների խարախուսում:

Ստուգումների արդյունքում խախտում կատարած դպրոցների թիվը՝ ըստ ստուգաթերթերի, ներկայացվել են Գծապատկեր 2-ում.



Ըստ Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալների՝ ստուգված դպրոցներում առավել ռիսկային է տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը (ըստ N 03 ստուգաթերթի խախտումներ են արձանագրվել 29 (93.5%) դպրոցներում) և համեմատաբար ավելի քիչ ռիսկային՝ սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների

հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման (N12 ստուգաթերթ) գործընթացները:

Ստուգված 31 դպրոցներից 18-ը Երևանի, 8-ը՝ ՀՀ Արարատի մարզի և 5-ը՝ ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներն են:

Երևանի ստուգված դպրոցների պատկերը՝ ըստ ստուգաթերթերի, ներկայացվել է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Երևանի 18 դպրոցների ստուգումների արդյունքներ												
Ստուգաթերթ	N01	N02	N03	N04	N05	N07	N08	N11	N12	N14	N15	Ընդհանուր ռիսկային միավոր
Գումարային ռիսկային միավոր	2.2	0.7	32.5	2.9	1.7	4.4	1.6	3.5	0.4	0	2	51.9
Միջինացված միավոր	0.12	0.04	1.81	0.16	0.09	0.24	0.09	0.19	0.02	0	0.11	2.9
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	1.3%	0.6%	8.2%	1.36%	1.1%	1.8%	0.8%	1.9%	0.13%	0	5.5%	2.54%

Ըստ վերոնշյալ տվյալների՝ ամենամեծ գումարային, ինչպես նաև միջինացված ռիսկային միավորները ձևավորվել են նույնպես տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (N 03 ստուգաթերթի խախտումներ արձանագրվել են բոլոր 16 (89%) դպրոցներում):

Երևանի ստուգված դպրոցներում հիմնականում սահմանված կարգով է իրականացվել սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացումը, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացումը, սովորողների հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրումը:

Չնայած օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացի ստուգման արդյունքում ձևավորված միջին կշռային միավորը 0, 11 է՝ այն կազմել է համապատասխան ստուգաթերթի (N15) կշռային միավորի 5.5%-ը, որը, ըստ մեծության, երկրորդն է տոկոսային միավորների շարքում: Ինչը նշանակում է, որ այդ դպրոցներում ռիսկային է նաև օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացը:

ՀՀ Արարատի մարզի 8 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները, ըստ ստուգաթերթերի, ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

ՀՀ Արարատի մարզի 8 դպրոցների ստուգումների արդյունքներ												
Ստուգաթերթ	N01	N02	N03	N04	N05	N07	N08	N11	N12	N14	N15	Ընդհանուր ռիսկային միավոր
Գումարային ռիսկային միավոր	1.6	1.5	24.8	1.3	0.9	0.6	6.2	1	0	0	0	37.9

<i>Միջինացված միավոր</i>	0.2	0.19	3.1	0.16	0.11	0.08	0.78	0.13	0	0	0	4.74
<i>Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը</i>	2.2 %	2.7%	14.1%	1.4%	1.3%	0.6%	6.5%	1.3%	0	0	0	4.16%

Ինչպես ներկայացված է աղյուսակ 4-ում՝ ՀՀ Արարատի մարզի ստուգված դպրոցներում ևս առավել ռիսկային է տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը (ըստ N 03 ստուգաթերթի՝ խախտումներ արձանագրվել են բոլոր 8 դպրոցներում): Սահմանված կարգով են իրականացվել թե՛ սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ աստեսավորման անցկացման, սովորողների հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման (N12 ստուգաթերթ), թե՛ օլիմպիադայի կազմակերպման և անցկացման (N15 ստուգաթերթ) գործընթացները:

ՀՀ Արարատի մարզի ստուգված դպրոցներում բարձր տոկոս է կազմել (ըստ մեծության երկրորդն է) նաև ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (N08) ձևավորված միջին կշռային միավորը: Ինչը նշանակում է, որ ՀՀ Արարատի մարզի ստուգված դպրոցներում խնդրահարույց է նաև ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի անցկացումը:

ՀՀ Արմավիրի մարզի 5 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները, ըստ ստուգաթերթերի, ներկայացված են աղյուսակ 5-ում.

*Աղյուսակ 5*

<i>ՀՀ Արմավիրի մարզի 5 դպրոցների ստուգումների արդյունքներ</i>												
<i>Ստուգաթերթ</i>	<i>N01</i>	<i>N02</i>	<i>N03</i>	<i>N04</i>	<i>N05</i>	<i>N07</i>	<i>N08</i>	<i>N11</i>	<i>N12</i>	<i>N14</i>	<i>N15</i>	<i>Ընդհանուր ռիսկային միավոր</i>
<i>Քույրապան ռիսկային միավոր</i>	0.5	0.5	16.2	1.1	0	4.5	3.4	0	0	0	1.4	27.6
<i>Միջինացված միավորներ</i>	0.1	0.1	3.24	0.22	0	0.9	0.68	0	0	0	0.28	5.52
<i>Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը</i>	1.1%	1.4%	14.7%	1.9%	0	6.9%	5.7%	0	0	0	14%	4.8%

Ըստ աղյուսակ 5-ի տվյալների՝ ՀՀ Արմավիրի մարզի ստուգված դպրոցներում ևս առավել ռիսկային է տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը (ըստ N03 ստուգաթերթի խախտումներ արձանագրվել են բոլոր 5 դպրոցներում): Սահմանված կարգով են իրականացվել մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին և նկարագրերին ներկայացվող պահանջները, սովորողի ուսումնական հաստատությունը ընդգրկումը, հաստատությունից սովորողի տեղափոխումը, ազատումը, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների

կրթության կազմակերպումը (ստուգաթերթ N11), ինչպես նաև սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողների՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման գործընթացները: Ըստ ստուգաթերթի կշռային միավորի նկատմամբ միջինացված ռիսկային միավորի տոկոսի մեծության՝ երկրորդ տեղում է օլիմպիադայի կազմակերպման և անցկացման (N15 ստուգաթերթ) գործընթացը:

Ստուգված 31 դպրոցների ստուգումների արդյունքները, ըստ ստուգաթերթերի, ունեն հետևյալ պատկերը (տե՛ս Աղյուսակ 6-ը).

Աղյուսակ 6


ՀՀ 31 դպրոցների ստուգումների արդյունքներ												
Ստուգաթերթ	N01	N02	N03	N04	N05	N07	N08	N11	N12	N14	N15	Ընդհանուր ռիսկային միավոր
Գումարային ռիսկային միավոր	4.3	2.7	73.5	5.3	2.6	9.5	11.2	4.5	0.4	0	3.4	117.4
Միջինացված միավորներ	0.14	0.09	2.4	0.17	0.08	0.31	0.36	0.15	0.01	0	0.11	3.8
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	1.6%	1.3%	10.9%	1.4%	0.9%	2.3%	3%	1.5 %	0.1%	0	6%	3.3%

Համաձայն Աղյուսակ 6-ի տվյալների՝ բարձր ռիսկային է տնօրենին ներկայացվող պահանջների կատարման գործընթացը (N 03 ստուգաթերթ): Համեմատաբար ցածր ռիսկային է սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողների՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջների կատարմանն ուղղված գործընթացը (N 12 ստուգաթերթ): Ըստ ստուգաթերթի կշռային միավորի նկատմամբ միջինացված ռիսկային միավորի տոկոսի մեծության՝ երկրորդ տեղում է օլիմպիադայի կազմակերպման և անցկացման (N 15 ստուգաթերթ) գործընթացը:

Վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի պահանջների կատարմանն (N 14 ստուգաթերթ) ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել՝ նշված դպրոցներում վճարովի ծառայությունների բացակայության պատճառով:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները ներկայացված են Գծապատկեր 3-ում:

**Ստուգաթերթերի ռիսկային միավորները՝ ըստ  
դպրոցների  
Գծապատկեր 3**




Ինչպես նկատելի է գծապատկերից՝ **ամենաբարձր** ռիսկային միավորը գրանցվել է **Արևաշատի միջնակարգ** դպրոցում՝ 7,7 միավոր, իսկ **ամենացածրը՝ Երևանի հ. 89 հիմնական դպրոցում և ԱրտՄՏԵՄ վարժարանում՝ 0,3-ական** միավոր:

Ստուգված 31 դպրոցներից 16-ը (51,6%) բարձր ռիսկային, 15-ը (48,4%)՝ միջին ռիսկային խմբերի դպրոցներ են:

2022 թվականի 1-ին եռամսյակում ստուգված դպրոցներից 7-ը (22,6%) տեսչական մարմնի կողմից ստուգվել էին նաև 2019 թվականին: Համեմատելով ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները՝ ստացվել է հետևյալ պատկերը (տե՛ս Գծապատկեր 4-ը ).

**2019 և 2022 թվականներին իրականացված ստուգման արդյունքում ռիսկային միավորների համեմատական պատկերը 33 7 դպրոցներում**  
Գծապատկեր 4



■ 2019 թվականին իրականացված ստուգման արդյունքում ձևավորված ռիսկային միավոր  
■ 2022 թվականին իրականացված ստուգման արդյունքում ձևավորված ռիսկային միավոր

Գծապատկեր 4-ի տվյալների համաձայն՝ 7 դպրոցներից 6-ում (86%) 2019 թվականի ստուգման արդյունքում ձևավորված ռիսկային միավորները 2022 թվականի ստուգման արդյունքում նվազել են:

Ռիսկային միավորները կտրուկ նվազել են 5 դպրոցներում, առավելագույնը՝ 96%-ով՝ Երևանի թիվ 39 հիմնական դպրոցում, իսկ Զրարբի միջնակարգ դպրոցում 2022 թվականի ստուգման արդյունքում ռիսկային միավորը բարձրացել է:

### 3. Խախտումների բնույթները՝

**ըստ ստուգումների արդյունքում կազմված ակտերի և լիազոր մարմինների ղեկավարներին ներկայացված գրություններում նշված խախտումների**

2022 թվականի 1-ին եռամսյակում 31 դպրոցների ստուգումների արդյունքում արձանագրվել են ինչպես նույնաբնույթ, այնպես էլ տարաբնույթ խախտումներ: Արձանագրված խախտումների բնույթները, ըստ խախտումների տեսակների և դպրոցների, ներկայացվել են ստորև.

❖ **Կանոնադրություն. 17 (55%) դպրոցներում 18 (6%) խախտում.**

- *օրենսդրական փոփոխությունների և*

*իրականացվող հանրակրթական ծրագրերի ամրագրում կանոնադրությունում*

- Իրականացվող ծրագրերի ամրագրում կանոնադրությունում. 17 դպրոցներից 2-ում (12%)՝ 2 (11%) խախտում. Երևանի հ. 26 հիմնական, Ռ. Ազարյանի միջնակարգ դպրոցներ:

- Օրենսդրական փոփոխությունների ամրագրում կանոնադրությունում. **16 (94%)** դպրոցներում՝ **16** խախտում (**89%**). *Երևանի հ.հ. 6, 7, 8, 18, 26, 27, 39, 78, 89, 128, 161 հիմնական, հ. 175 միջնակարգ, հ.հ. 54, 83, 105 ավագ, «Էլիտա» միջնակարգ դպրոցներ:*

Ելնելով վերոնշյալից՝ կանոնադրությունների անհամապատասխանության խախտումների գերակշիռ մասը՝ **89%-ը**, վերաբերել է դպրոցների կանոնադրություններում օրենսդրական փոփոխությունների ամրագրման բացակայությանը:

Բոլոր խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են հանձնարարականներ (լիազոր մարմիններին՝ առաջարկություններ):

❖ *Լիցենզիա. 1 (3%) դպրոցում՝ 1 (0,4%) խախտում.*

*- հանրակրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի առկայություն*

Զրարբիի միջնակարգ դպրոցը հանրակրթական ծրագրերն իրականացնում է առանց համապատասխան լիցենզիաների (տրվել է հանձնարարական):

❖ *Ներքին գնահատման գործընթաց. 13 (42%) դպրոցներում՝ 21 (7%) խախտում.*

*- իրականացում,*

*- ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին,*

*- հրապարակում*

Արձանագրված խախտումները վերաբերել են ներքին գնահատման գործընթացի իրականացմանը, ինչպես նաև համապատասխան մարմիններին ներկայացմանը.

- *Երևանի հ. 6 հիմնական դպրոց (ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին),*
- *Երևանի հ. 18 հիմնական դպրոց (ներկայացում խորհրդակցական մարմիններին),*
- *Երևանի հ. 27 հիմնական դպրոց (ներկայացում խորհրդակցական մարմիններին),*
- *Երևանի հ. 83 ավագ դպրոց (իրականացում, ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին),*

• *«Էլիտա» միջնակարգ դպրոց (իրականացում, ներկայացում խորհրդակցական մարմիններին, հրապարակում),*

- *Ռ. Ագարյանի միջնակարգ դպրոց (իրականացում),*
- *ԱրտՄՏԵՄ վարժարան (իրականացում),*
- *Սյզեստանի միջնակարգ դպրոց (ներկայացում կառավարման մարմին),*
- *Հայանխատի միջնակարգ դպրոց (ներկայացում կառավարման մարմին),*
- *Զրարբիի միջնակարգ դպրոց (ներկայացում կառավարման մարմին, հրապարակում),*
- *Հայկաշենի միջնակարգ դպրոց (իրականացում, ներկայացում կառավարման մարմին),*
- *Եղեգնավանի միջնակարգ դպրոց (ներկայացում կառավարման մարմին),*
- *Արևարտյրի միջնակարգ դպրոց (ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին):*

Վերոգրյալից հետևում է, որ **13** դպրոցներից **5-ը (38%)** չեն իրականացրել ներքին գնահատում, որը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է՝ վարչական և մանկավարժական աշխատողների, սովորողների և ծնողների մասնակցությամբ, իսկ **11-ը (85%)** ներքին գնահատման արդյունքերը չեն ներկայացրել կառավարման և (կամ) խորհրդակցական մարմիններին:

Նշված **21** խախտումներից ժամկետանց են համարվել **20-ը (95%)**, քանի որ ներքին գնահատման իրականացման, կառավարման և խորհրդակցական մարմիններին ներկայացման, հրապարակման ժամկետներն արդեն իսկ ավարտված են:

❖ **Պաշտոնային պարտականությունների կատարում. 8 (26%) դպրոցներում` 28 (10%) խախտում.**

*- տնօրենի պաշտոնային պարտականություններ,  
- մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականություններ*

- **Տնօրենի պաշտոնային պարտականությունների** կատարման խախտումներ արձանագրվել են **8** դպրոցներից **7-ում (87,5%)` 25 (89%)** խախտում. հաշվետվողականություն դպրոցի կառավարման մարմնին` խորհրդին, մանկավարժական աշխատողների հաշվետվությունների հաստատում և այլն.

• **Երևանի հ. 8 հիմնական դպրոց** (դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում` կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմի ներկայացում խորհրդին),

• **Երևանի հ. 83 ավագ դպրոց** (ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության ներկայացում խորհրդին),

• **ՍԷլիտա» միջնակարգ դպրոց** (ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի, մանկավարժական աշխատողների հաշվետվությունների հաստատում, դպրոց տեղափոխված սովորողների անվանացանկի ներկայացում ՀՀ ԿԳՄՄՆ, փոխարինման մատյանի առկայություն, ուսումնադաստիարակչական պլանի, տարիֆիկացիայի, հաստիքացուցակի կազմում, հիմնադիր տնօրենի կողմից ուսումնական արձակուրդների փոփոխությունների կատարում),

• **Ռ. Ագարյանի միջնակարգ դպրոց** (աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու և քաղաքացիական պաշտպանության պլանների հաստատում),

• **Արևարտյրի միջնակարգ դպրոց** (դպրոցի ուսուցչի մրցույթի կարգի մշակում և ներկայացում խորհրդին),

• **Հայկաշենի միջնակարգ դպրոց** (ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման ապահովում, խորհրդի հաստատմանը ներկայացում, մանկավարժական աշխատողների հաշվետվությունների հաստատում),

• **Եղեգնավանի միջնակարգ դպրոց** (դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում` կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմի ներկայացում խորհրդին):

Տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարման խախտումներ ունեցող **7** դպրոցներից **5-ում (71%)** արձանագրվել են տնօրենի` խորհրդին հաշվետու լինելու վերաբերյալ խախտումները:

Արձանագրված **25** խախտումներից **7-ը (28%)** համարվել են ժամկետանց, քանի որ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին (ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում) և հետևանքները վերացնել հնարավոր չէ. ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, ներքին կարգապահական կանոնների ... ներկայացում խորհրդին:

- **Մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականություններ կատարման** խախտումներ արձանագրվել են **7** դպրոցներից **3-ում (43%)` 3 (11%)** խախտում. տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, լոգոպեդ, դասղեկ.

• **Հայկաշենի միջնակարգ դպրոց** (ուսումնական աշխատանքի գծով տեղակալ` ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում),

• **Լուսառատի միջնակարգ դպրոց** (դասղեկներ` սովորողներին կարգապահական տույժի ներկայացում),

• **«Էլիտա» միջնակարգ դպրոց** (լոգոպեդ` պաշտոնային պարտականությունների կատարում):

Նշված 3 խախտումներից ժամկետանց են համարվել 2-ը (67%), որոնք վերաբերել են ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, դասղեկների պաշտոնային պարտականությունների կատարմանը նախորդող ուսումնական տարիներին:

**❖ Վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածություն. 7 (23%) դպրոցներում՝ 8 (3%) խախտում.**

*- ուսումնական ծանրաբեռնվածություն,  
- որակավորման համապատասխանություն*

Նշված խախտումները վերաբերել են տնօրենի կամ տնօրենի տեղակալների ուսումնական ծանրաբեռնվածության անհամապատասխանությանը՝ ներառյալ որակավորման պահանջը.

- **Երևանի հ. 8 հիմնական դպրոց** (տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի ծանրաբեռնվածություն),
- **Երևանի հ. 39 հիմնական դպրոց** (տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի ծանրաբեռնվածություն, որակավորման համապատասխանություն),
- **Երևանի 83 ավագ դպրոց** (տնօրենի ՄԿԱ աշխատանքի գծով տեղակալի ծանրաբեռնվածություն),
- **Երևանի հ. 128 հիմնական դպրոց** (տնօրենի ծանրաբեռնվածություն),
- **Լուսառատի միջնակարգ դպրոց** (տնօրենի ՄԿԱ աշխատանքի գծով տեղակալի ծանրաբեռնվածություն),
- **Եղեգնավանի միջնակարգ դպրոց** (տնօրենի ՄԿԱ աշխատանքի գծով տեղակալի ծանրաբեռնվածություն),
- **Զրարբքի միջնակարգ դպրոց** (տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի ծանրաբեռնվածություն):

Վերոգրյալից հետևում է, որ ուսումնական ծանրաբեռնվածության անհամապատասխանության 75% (6) խախտումները վերաբերել են 6 (86%) դպրոցների տնօրենների տեղակալներին:

Արձանագրված 8 խախտումներից 7-ը (87,5%) ժամկետանց են, քանի որ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին:

**❖ Ուսուցչի մրցույթի ընթացակարգ. 5 (16%) դպրոցներում՝ 18 (6%) խախտում.**

*- մրցույթի հայտարարման ժամկետ,  
- հանձնաժողովի ձևավորում,  
- մրցույթին մասնակցելու մասին որոշման կայացում, մասնակիցների անվանացանկի հաստատում,  
մրցույթի վերաբերյալ որոշումների արձանագրում*

Ուսուցչի մրցույթի ընթացակարգի խախտումները հիմանականում վերաբերել են մրցութային հանձնաժողովների ձևավորմանը 5 դպրոցներից 3-ում (60%)՝ 11 (61%) խախտում.

- **Երևանի հ. 6 հիմնական դպրոց** (մրցույթին մասնակցելու մասին որոշման կայացում, մասնակիցների անվանացանկի հաստատում),
- **Երևանի հ. 78 հիմնական դպրոց** (մրցույթի մասին հայտարարության ժամկետ),
- **Երևանի հ. 83 ավագ դպրոց** (հանձնաժողովի ձևավորում),
- **Հայանիստ միջնակարգ դպրոց** (հանձնաժողովի ձևավորում),
- **Հայկաշենի միջնակարգ դպրոց** (հանձնաժողովի ձևավորում, մրցույթի վերաբերյալ որոշումների արձանագրում):

Ուսուցչի մրցույթի ընթացակարգին վերաբերող բոլոր 18 (100%) խախտումները ժամկետանց են, հետևաբար հանձնարարականներ չեն ստրվել:

❖ **Կատրեր. մանկավարժական աշխատողների նշանակում. 23 (74%) դպրոցներում՝ 71 (25%) խախտում.**

- ուսուցիչ,
- մինչև մրցույթ,
- մրցույթի հաղթող,
- առանց մրցույթ, ներառյալ՝ ոչ մասնագետ,
- ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ,
- մասնագիտացված աշխատանքների գծով տնօրենի տեղակալ (այսուհետ՝ ՄԿԱ),
- դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ (այսուհետ՝ ԴԱԿ),
- ուսուցչի օգնական,
- գրադարանավար

Արձանագրված 71 խախտումները վերաբերել են 58 մանկավարժական աշխատողների նշանակմանը: Միայն մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ արձանագրվել են Հովտաշատի միջնակարգ դպրոցում:

Խախտումների և մանկավարժական աշխատողների թվային տվյալների անհամապատասխանությունը կապված է այն հանգամանքի հետ, որ նույն անձը խախտումով նշանակվել է տարբեր պաշտոններում՝ մինևույն կամ տարբեր ժամանակահատվածներում (օրինակ՝ նույն անձը խախտումով նշանակվել է որպես ուսուցիչ՝ մինչև մրցույթ, այնուհետև՝ որպես մրցույթի հաղթող, կամ մինչև մրցույթ՝ տարբեր ժամանակահատվածներում, կամ նշանակվել է որպես մի քանի առարկաների դասավանդող ուսուցիչ):

Մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ չեն արձանագրվել հետևյալ 8 (26%) դպրոցներում. Երևանի հ.հ. 27, 39, 89 հիմնական, հ.հ. 54, 105 ավագ, «Էլիտա» և Արգավանդի, Հայկաշենի միջնակարգ դպրոցներ: Հարկ է նշել, որ Երևանի հ. 27 հիմնական դպրոցում ուսուցչի մրցույթ չի կայացել:

Մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներին վերաբերող տեղեկատվությունը՝ ըստ դպրոցների, ներկայացված է Աղյուսակ 7-ում.

Աղյուսակ 7

Հ/Հ	Դպրոցի անվանում	Խախտումների թիվ	Մանկավարժական աշխատողների թիվ	Խախտման տեսակը
1	Երևանի հ. 6 հ/դ	2	1	Մինչև մրցույթ, մրցույթի հաղթող
2	Երևանի հ. 7 հ/դ	7	3	Առանց մրցույթ՝ ոչ մասնագետ, մինչև մրցույթ, մրցույթի հաղթող
3	Երևանի հ. 8 հ/դ	1	1	Ուսուցիչ
4	Երևանի հ. 18 հ/դ	1	1	Ուսուցիչ
5	Երևանի հ. 26 հ/դ	2	2	Ուսուցիչ, ուսուցչի օգնական
6	Երևանի հ. 78 հ/դ	3	2	Ուսուցիչ, ՄԿԱ, մինչև մրցույթ
7	Երևանի հ. 83 ա/դ	1	1	ԴԱԿ
8	Երևանի հ. 128 հ/դ	3	3	Ուսուցչի օգնական, գրադարանավար
9	Երևանի հ. 161 հ/դ	1	1	Գրադարանավար
10	Երևանի հ. 175 մ/դ	2	2	Ուսուցիչ, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
11	Ռ.Ազարյանի մ/դ	8	6	Ուսուցիչ
12	ԱրտՄՏԵՄ վարժարան	1	1	Ուսուցիչ

13	Լուսատառի մ/դ	2	2	Գրադարանավար, ուսուցչի օգնական
14	Հայանիստի մ/դ	5	4	Ուսուցիչ, մինչև մրցույթ
15	Սյգեստանի մ/դ	2	2	Ուսուցիչ, մինչև մրցույթ
16	Տափերականի մ/դ	3	2	Մինչև մրցույթ, մրցույթի հաղթող
17	Եղեգնավանի մ/դ	2	2	Ուսուցիչ
18	Հովտաշատի մ/դ	3	2	Մինչև մրցույթ
19	Արևաբույրի մ/դ	1	1	Ուսուցիչ
20	Սյգավանի մ/դ	2	2	Ուսուցիչ, մինչև մրցույթ
21	Ջրաբբիի մ/դ	11	9	Ուսուցիչ, մինչև մրցույթ
22	Արևաշատի մ/դ	6	6	Ուսուցիչ, մինչև մրցույթ, ԴԱԿ
23	Սլաշկերտի մ/դ	2	2	Մինչև մրցույթ
<b>Ընդամենը</b>		<b>71</b>	<b>58</b>	

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ առավել մեծ թվով մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ արձանագրվել են Ջրաբբիի միջնակարգ դպրոցում. **9 (16%)** մանկավարժական աշխատողների նշանակման **11 (15%)** խախտում:

Մեծ թվով նշանակման խախտումներ արձանագրվել են նաև Երևանի հ. 7 հիմնական, Ռ. Ագարյանի և Արևաշատի միջնակարգ դպրոցներում, համապատասխանաբար՝ **7, 8** և **6** խախտումներ, իսկ մեծ թվով մանկավարժների՝ Ռ. Ագարյանի և Արևաշատի միջնակարգ դպրոցներում՝ **6-ական**:


Աղյուսակ 8-ում ներկայացված են մանկավարժական աշխատողների նշանակման խախտումների տեսակները՝ ըստ դպրոցների և խախտումների թվի.

**Աղյուսակ 8**

Հ/Հ	Խախտման տեսակ	Դպրոցի անվանում (խախտումների թիվը՝ ըստ դպրոցների)	Դպրոցների թիվ	Խախտումների թիվ
1	Ուսուցիչ	Երևանի հ. 8 հ/դ (1), Երևանի հ. 18 հ/դ (1), Երևանի հ. 26 հ/դ (1), Երևանի հ. 78 հ/դ (1), Երևանի հ. 175 մ/դ (1), Ռ. Ագարյանի մ/դ (8), Հայանիստի մ/դ (2), Սյգեստանի մ/դ (1), ԱրտՄԵՄ վարժարան (1), Եղեգնավանի մ/դ (2), Արևաբույրի մ/դ (1), Սյգավանի մ/դ (1), Ջրաբբիի մ/դ (6), Արևաշատի մ/դ (2)	14	29
2	Մինչև մրցույթ	Երևանի հ. 6 հ/դ (1), Երևանի հ. 7 հ/դ (3), Երևանի հ. 78 հ/դ (1), Հայանիստի մ/դ (3), Սյգեստանի մ/դ (1), Տափերականի մ/դ (2), Հովտաշատի մ/դ (3), Սյգավանի մ/դ (1), Ջրաբբիի մ/դ (5), Արևաշատի մ/դ (3), Սլաշկերտի մ/դ (2)	11	25
3	Մրցույթի հաղթող	Երևանի հ. 6 հ/դ (1), Երևանի հ. 7 հ/դ (1), Տափերականի մ/դ (1)	3	3
4	Առանց մրցույթ, ներառյալ ոչ մասնագետ	Երևանի հ. 7 հ/դ (3)	1	3
5	Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	Երևանի հ. 175 մ/դ (1)	1	1
6	ՄԿԱ գծով տեղակալ	Երևանի հ. 78 հ/դ (1)	1	1
7	ԴԱԿ	Երևանի հ. 83 ա/դ (1), Արևաշատի մ/դ (1)	2	2
8	Ուսուցչի օգնական	Երևանի հ. 26 հ/դ (1), Երևանի հ. 128 հ/դ (2), Լուսատառի մ/դ (1)	3	4
9	Գրադարանավար	Երևանի հ. 128 հ/դ (1), Երևանի հ. 161 հ/դ (1), Լուսատառի մ/դ (1)	3	3
<b>Ընդամենը</b>				<b>71 խախտում</b>

Վերոնշյալ տվյալներից հետևում է, որ հայտնաբերված խախտումների հիմնական մասը վերաբերել է ուսուցչի նշանակմանը: Այսպես՝ 23 դպրոցներից 14-ում (61%) արձանագրվել են ուսուցչի նշանակման 29 (41%) խախտումներ, իսկ 11-ում (48%)՝ մինչև ուսուցչի թափուր տեղի մրցութային կարգով համալրվելը՝ 25 (35%) խախտում:

Գծապատկեր 5-ում ներկայացվել է մանկավարժական աշխատողների նշանակման խախտումների տեսակները՝ ըստ դպրոցների և խախտումների տոկոսային համամասնության.



Մանկավարժական աշխատողների նշանակման 71 խախտումներից ժամկետանց են համարվել 42-ը (59%). քանի որ խախտումների մի մասի հետևանքները վերացնել արդեն իսկ հնարավոր չէ. ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում լրացել է մանկավարժական աշխատողի պահանջվող աշխատանքային ստաժը, փոխարինել է ժամանակավորապես, նշանակել է մինչև մրցույթ, ազատվել է աշխատանքից:

**❖ Խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեություն. 11 (35%) դպրոցներում 33 (12%) խախտում.**

- մանկավարժական խորհրդի ձևավորում և գործունեություն,
- մեթոդական միավորումների ձևավորում և գործունեություն,
- աշակերտական խորհրդի ձևավորում,
- ծնողական խորհրդի ձևավորում և գործունեություն

- Մանկավարժական խորհուրդ՝ ձևավորում և գործունեություն. 7 (64%) դպրոցներում 16 (48%) խախտում.

- ձևավորում,
- գործունեություն.

Մանկավարժական խորհրդի գործունեության խախտումներ արձանագրվել են բոլոր 7 (100%) դպրոցներում. խորհրդի անդամի առաջադրմանը, փոխադրական

քննությունների սահմանմանը, խորհրդատվական ծառայությունների հարցերի քննարկմանը և այլն.

- **Երևանի հ. 8 հիմնական դպրոց**՝ (խորհրդի անդամի առաջադրում),
- **Երևանի հ. 78 հիմնական դպրոց**՝ (խորհրդի անդամի առաջադրում),
- **Երևանի հ. 83 ավագ դպրոց**՝ (փոխադրական քննությունների սահմանանում, անցկացում, նիստերի պարբերականություն),

• **«Էլիտա» միջնակարգ դպրոց** (ձևավորում, նիստերի պարբերականություն, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, կազմակերպման, խմբակների ձևավորման, խորհրդատվական ծառայությունների մատուցման հարցերի քննարկում),

- **Եղեգնավանի միջնակարգ դպրոց** (խորհրդի անդամի առաջադրում),
- **Ալաշկերտի միջնակարգ դպրոց** (ձևավորում, խորհրդատվական ծառայությունների մատուցման հարցերի քննարկում),

• **Զրարբի միջնակարգ դպրոց** (բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի որոշումների ընդունում):

Մանկավարժական խորհրդի ձևավորմանը և գործունեությանը վերաբերող **16** խախտումներից ժամկետանց են համարվել **9-ը (56%)**, քանի որ օրինակ՝ 10-11-րդ դասարանների փոխադրական կամ լրացուցիչ քննությունների սահմանմանը, անցկացմանը, նիստերի պարբերականությանը և մի շարք այլ գործառնություններին վերաբերող խախտումների հետևանքներն արդեն իսկ վերացնել հնարավոր չէ, քանի որ այդ խախտումները կատարվել են նախորդող ուսումնական տարիներին:

- **Մեթոդական միավորումներ՝ ձևավորում և գործունեություն. 6 (55%)** դպրոցներում **11 (33%)** խախտում.

- *ձևավորում,  
- գործունեություն*

Մեթոդական միավորումների գործունեությանը վերաբերող խախտումներ արձանագրվել են **բոլոր 6 (100%)** դպրոցներում. դասաժամերի նախնական բաշխում, դպրոցական բաղադրիչ տնօրինման առաջարկություն, ԱՌԻՊ-ի քննարկում և այլն:

- **Երևանի հ. 6 հիմնական դպրոց** (դպրոցական բաղադրիչի տնօրինման առաջարկություն),
- **Երևանի հ. 8 հիմնական դպրոց** (ԱՌԻՊ-ի քննարկում),
- **Երևանի հ. 89 հիմնական դպրոց** (նիստերի պարբերականություն),
- **«Էլիտա» միջնակարգ դպրոց** (դասաժամերի նախնական բաշխում, դպրոցական բաղադրիչի տնօրինման առաջարկություն),

- **Հայկաշենի միջնակարգ դպրոց** (ձևավորում, գործունեություն),
- **Ալաշկերտի միջնակարգ դպրոց** (ձևավորում, դասաժամերի նախնական բաշխում, դպրոցական բաղադրիչի տնօրինման առաջարկություն, ԱՌԻՊ-ի քննարկում):

Մեթոդական միավորումների ձևավորմանը և գործունեությանը վերաբերող **11** խախտումներից ժամկետանց են համարվել **5-ը (45%)**, քանի որ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին. դասաժամերի նախնական բաշխում, դպրոցական բաղադրիչի տնօրինում, ԱՌԻՊ-ների քննարկում:

- **Աշակերտական խորհուրդ՝ ձևավորում. 2 (18%)** դպրոցներում **3 (9%)** խախտում.

- *ձևավորում*

- **Երևանի հ. 27 հիմնական դպրոց** (5-րդ դասարանի սովորողների ընդգրկում),
- **«Էլիտա» միջնակարգ դպրոց** (նիստի հրավիրում՝ ձևավորում):

Աշակերտական խորհրդի ձևավորմանը վերաբերող **բոլոր 3** խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են հանձնարարականներ (ժամկետանց խախտումները կազմել են **0%**):

- **Ծնողական խորհուրդ՝ ձևավորում և գործունեություն. 2 (18%)** դպրոցներում **3 (9%)** խախտում.

- *ձևավորում,  
- գործունեություն*

- **«Էլիտա» միջնակարգ դպրոց** (*ձևավորում, գործունեություն*),
- **Եղեգնավանի միջնակարգ դպրոց** (*խորհրդի անդամի առաջադրում*):

Ծնողական խորհրդի ձևավորմանը և գործունեությանը վերաբերող **բոլոր 3** խախտումների հետևանքները վերացնելու նպատակով նույնպես տրվել են հանձնարարականներ (ժամկետանց խախտումները կազմել են **0%**):

❖ **Ուսումնական պլանի պահանջներ. 11 (35%)** դպրոցներում՝ **24 (9%)** խախտում.

- *առարկայի դասավանդում,  
- առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանություն,  
- սովորողների ուսումնական ծանրաբեռնվածություն,  
- այլ*

- **Առարկայի դասավանդում. 11** դպրոցներից **4-ում (36%)՝ 7 (29%)** խախտում (7 առարկա).

- **Երևանի հ. 26 հիմնական դպրոց** (*«Բնֆորմատիկա»*),
- **Երևանի հ. 27 հիմնական դպրոց** (*տնային ուսուցում՝ «Աշխարհագրություն», «Քիմիա», «Անգլերեն», «Համաշխարհային պատմություն»*),

- **Երևանի հ. 78 հիմնական դպրոց** (*«ՆՁՊ»*)
- **Արևաբույրի միջնակարգ դպրոց** (*«Տեխնոլոգիա» (տղաներ խումբ)*):

- **Առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանություն. 8** դպրոցներում (**73%**)՝ **12 (50%)** խախտում (5 առարկա).

- **Երևանի հ. 26 հիմնական դպրոց** (*«Ազգային երգ ու պար»*),
- **Երևանի հ. 54 ավագ դպրոց** (*«Ֆրանսերեն»՝ որպես երրորդ օտար լեզու*),
- **Երևանի հ. 175 հիմնական դպրոց** (*«Ձեռնարկատիրական կրթություն»*),
- **Լուսառատի միջնակարգ դպրոց** (*«Ձեռնարկատիրական կրթություն»*),
- **Այգեստանի միջնակարգ դպրոց** (*«Անգլերեն»՝ որպես երրորդ օտար լեզու*),
- **Տաիերականի միջնակարգ դպրոց** (*«Ձեռնարկատիրական կրթություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն»*),

- **Եղեգնավանի միջնակարգ դպրոց** (*«Ձեռնարկատիրական կրթություն»*),
- **Արգավանդի միջնակարգ դպրոց** (*«Ֆիզկուլտուրա», «Ձեռնարկատիրական կրթություն», «Ազգային երգ ու պար»*):

- **Սովորողների ուսումնական բեռնվածություն 2 (18%)** դպրոցներում **2** խախտում (**8%**).

- **«Էլիտա» միջնակարգ դպրոց,**
- **Եղեգնավանի միջնակարգ դպրոց:**

- Այլ՝ **1** դպրոցում (**9%**)՝ **2** խախտում (**12,5%**). ուսումնական պլանի առարկայացանկում ներառված հեղինակային կրթական ծրագրով նախատեսված

«Էվրիկա» առարկայի հաստատված ծրագրի բացակայություն, ներառում դասացուցակում, դասավանդում ուսումնական պարապմունքների ժամանակից դուրս.

• *«Էլիտա» միջնակարգ դպրոց:*

Ելնելով վերոգրյալից՝ ուսումնական պլանի պահանջների կատարմանը վերաբերող խախտումների 50%-ը վերաբերել է առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանությանը, որն արձանագրվել է 8 (73%) դպրոցներում:

Նշվածից հետևում է, որ այդ դպրոցներում կրթության գործընթացը չի կարգավորվել օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով, դպրոցի տնօրենը ուսումնական պլանին համապատասխան չի ապահովել կրթական ծրագրերի իրականացումը, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու չի եղել դպրոցում ուսումնական ծրագրերի կատարման համար, իսկ տվյալ առարկաների ուսուցիչները չեն ապահովել տվյալ առարկայի կրթական ծրագրի կատարումը՝ խախտելով կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջների կատարումը:

Ուսումնական պլանի պահանջների 24 խախտումներից ժամկետանց են համարվել 14-ը (58%), քանի որ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին. առարկայի ուսումնասիրում, առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանություն, ուսումնական բեռնվածություն:

❖ *Կրթության կազմակերպում. 3 (10%) դպրոցներում՝ 10 (4%) խախտում.*

- *արտերկրից ընդունված և ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման կազմակերպման իրականացում*

- Արտերկրից ընդունված սովորողների ուսուցման կազմակերպում. 2 (67%) դպրոցներում՝ 9 (90%) խախտում. հանրակրթության մեջ ընդգրկելու նպատակով առարկայական մասնագետների խմբի ստեղծում, ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր ստուգման իրականացում, ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի հաստատում, սովորողի համար բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար ուսուցման կազմակերպում.

• *Երևանի հ. 18 հիմնական դպրոց,*

• *Երևանի հ. 78 հիմնական դպրոց:*

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (հուզականային ոլորտի խանգարումներ) ունեցող սովորողի կրթության կազմակերպման իրականացում. 1 (33%) դպրոց (1%) խախտում.

• *Լուսառատի միջնակարգ դպրոց:*

Նշված 10 խախտումներից ժամկետանց են համարվել արտերկրից ընդունված սովորողների ուսուցման կազմակերպմանը վերաբերող բոլոր 9-ը (90%) խախտումները, քանի որ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին:

❖ *Օլիմպիադայի գործընթաց. 8 (26%) դպրոցներում՝ 19 (7%) խախտում.*

- *ժամկետների պահպանում,*  
- *կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում,*  
- *գործընթացի կազմակերպում, վերահսկում,*

Օլիմպիադայի գործընթացի խախտումներ կատարած 8 դպրոցներից 6-ը (75%) սահմանված կարգով չեն ձևավորել առարկայական հանձնաժողովները և (կամ) կազմկոմիտեն:

- **Երևանի հ. 18 հիմնական դպրոց** (ժամկետ, առարկայական հանձնաժողովների ձևավորում),
- **Երևանի հ. 27 հիմնական դպրոց** (ժամկետ, խրախուսում),
- **Երևանի հ. 105 ավագ դպրոց** (կազմկոմիտեի ձևավորում, կազմի հաստատում, ժամկետ, կազմակերպում, վերահսկում, խրախուսում),
- **«Էլիտա» միջնակարգ դպրոց** (կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում),
- **Ռ. Ազարյանի միջնակարգ դպրոց** (կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում),
- **ԱրտՄՏԵՄ վարժարան** (կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում),
- **Արևաշատի միջնակարգ դպրոց** (կազմակերպում),
- **Հայկաշենի միջնակարգ դպրոց** (կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում):

Վերը նշված բոլոր 19 (100%) խախտումները համարվել են ժամկետանց, քանի որ օլիմպիադայի գործընթացն արդեն իսկ ավարտվել է, հետևաբար խախտումների հետևանքները վերացնել հնարավոր չէ:

**❖ Սովորողների համակազմի ձևավորում. 14 (45%) դպրոցներում՝ 30 (11%) խախտում.**

- լիցենզիայով սահմանված սովորողների թվի գերազանցում,
- սովորողի հանրակրթության հաջորդականության սկզբունքի ապահովում,
- սովորողի համապատասխան ուսուցման լեզվի կազմակերպում,
- միջնակարգ կրթության պարտադիր պահանջի ապահովում

Սովորողների համակազմի ձևավորման խախտումները վերաբերել են սովորողների հանրակրթության հաջորդականության սկզբունքների ապահովմանը, նրանց համապատասխան ուսուցման լեզվի կազմակերպմանը, միջնակարգ կրթության պարտադիր պահանջի ապահովմանը, ինչպես նաև լիցենզիայով սահմանված սովորողների թվի գերազանցմանը:

- **Երևանի հ. 7 հիմնական դպրոց** (կրթության հաջորդականություն՝ 1 սովորող, ուսուցման լեզու՝ 5 սովորողներ),
- **Երևանի հ. 8 հիմնական դպրոց** (ուսուցման լեզու՝ 5 սովորողներ),
- **Երևանի 27 հիմնական դպրոց** (կրթության հաջորդականություն՝ 1 սովորող),
- **Երևանի հ. 78 հիմնական դպրոց** (պարտադիր կրթություն՝ 3 սովորողներ),
- **Երևանի հ. 128 հիմնական դպրոց** (սահմանային տեղերի գերազանցում),
- **Երևանի հ. 161 հիմնական դպրոց** (սահմանային տեղերի գերազանցում),
- **«Էլիտա» միջնակարգ դպրոց** (կրթության հաջորդականություն՝ 2 սովորողներ),
- **Տավերականի միջնակարգ դպրոց** (կրթության հաջորդականություն՝ 1 սովորող),
- **Եղեգնավանի միջնակարգ դպրոց** (կրթության հաջորդականություն, պարտադիր կրթություն՝ 1-ական սովորող, սահմանային տեղերի գերազանցում),
- **Այգավանի միջնակարգ դպրոց** (կրթության հաջորդականություն՝ 1 սովորող, սահմանային տեղերի գերազանցում),
- **Զրարբիի միջնակարգ դպրոց** (կրթության հաջորդականություն՝ 1 սովորող),
- **Արևաշատի միջնակարգ դպրոց** (կրթության հաջորդականություն՝ 1 սովորող սահմանային տեղերի գերազանցում),
- **Արևաբույրի միջնակարգ դպրոց** (սահմանային տեղերի գերազանցում),
- **Արգավանդի միջնակարգ դպրոց** (սահմանային տեղերի գերազանցում):

Սովորողների համակազմի ձևավորման 30 խախտումներ կատարած 14 դպրոցները՝ ըստ խախտումների տեսակների, խմբավորվել են հետևյալ կերպ. 8 (57%) դպրոցներում արձանագրված 9 (30%) խախտումները վերաբերել են սովորողների հանրակրթության հաջորդականության սկզբունքների ապահովմանը, 7 (50%) դպրոցներում խախտումներից 7-ը (23%)՝ լիցենզիայով սահմանված սովորողների թվի գերազանցմանը, 2 (14%) դպրոցներում 10 (33%) խախտումները՝ սովորողների համապատասխան ուսուցման լեզվի կազմակերպմանը, 2 (14%) դպրոցներում 4-ը (13%)՝ միջնակարգ կրթության պարտադիր պահանջի ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից՝

- առավել մեծ թիվ (%) են կազմել ուսուցման լեզվի՝ 10 (33%), կրթության հաջորդականության՝ 9 (30%) և լիցենզիայի գերազանցման՝ 7 (23%), վերաբերյալ խախտումները,

- առավել մեծ թիվ են (%) կազմել այն դպրոցները, որտեղ արձանագրվել են հետևյալ տեսակի խախտումները. 8 (57%) դպրոցներում արձանագրվել են կրթության հաջորդականությանը, իսկ 7 (50%) դպրոցներում՝ լիցենզիայի թվի գերազանցմանը վերաբերող խախտումները:

Արձանագրված 30 խախտումներից 20-ը (67%) համարվել են ժամկետանց, քանի որ այդ խախտումները կատարվել են նախորդող ուսումնական տարիներին և հետևանքները վերացնել հնարավոր չէ (լիցենզիայով սահմանված սովորողների թվի գերազանցում, հանրակրթության հաջորդականության սկզբունքի և միջնակարգ կրթության պարտադիր պահանջի ապահովում, համապատասխան ուսուցման լեզվի կազմակերպում):

**4. Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները և բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ստուգված դպրոցների**

Ինչպես արդեն նշվել է 2022 թվականի 1-ին եռամսյակում խախտումներ արձանագրվել են ստուգված բոլոր 31 դպրոցներում՝ 281 խախտում:

Աղյուսակ 9-ում ներկայացվել են առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների (%) և խախտումների թվի (%).

Աղյուսակ 9


Հ/Հ	Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները	Դպրոցների թիվ (%)	Խախտումների թիվ (%)
1	Կադրեր՝ մանկավարժական աշխատողների նշանակում	23 (74%)	71 (25%)
2	Կանոնադրության անհամապատասխանություն	17 (55%)	18 (6%)
3	Սովորողների համակազմի ձևավորում	14 (45%)	30 (11%)
4	Ներքին գնահատման գործընթաց	13 (42%)	21 (7%)
5	Խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեություն	11 (35%)	33 (12%)
6	Ուսումնական պլանի պահանջներ	11 (35%)	24 (9%)
7	Օլիմպիադայի գործընթաց	8 (26%)	19 (7%)
8	Պաշտոնային պարտականությունների կատարում	8 (26%)	28 (10%)
9	Վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածություն	7 (23%)	8 (3%)

Ելնելով վերոգրյալից՝ առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների թվի (%) վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը,

կանոնադրության անհամապատասխանությանը և սովորողների համակազմի ձևավորմանը, որոնք արձանագրվել համապատասխանաբար՝ 23 (74%), 17 (55%) և 14 (45%) ստուգված դպրոցներում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ խախտումների թվի (%), վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ 71 (25%), խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ 33 (12%, սովորողների համակազմի ձևավորմանը՝ 30 (11%) խախտում:

Գծապատկեր 6-ում ներկայացվել են առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների և խախտումների տոկոսային համամասնության.



Ինչպես արդեն նշվել է՝ 2022 թվականի 1-ին եռամսյակում ստուգումներ իրականացվել են ՀՀ 31 դպրոցներում՝ Երևանի 18, ՀՀ Արարատի մարզի 8, ՀՀ Արմավիրի մարզի 5 դպրոցներում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ստուգված դպրոցների, ունեն հետևյալ պատկերը (տես աղյուսակ 10).

Աղյուսակ 10

Հ/Հ	Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները	Խախտում կատարած դպրոցների տոկոսային թիվը		
		Երևան	ՀՀ Արարատի մարզ	ՀՀ Արմավիրի մարզ
1	Կադրեր	67%	100%	60%
2	Կանոնադրություն	100%	0%	0%
3	Սովորողների համակազմ	39%	62,5%	60%
4	Ներքին գնահատում	39%	50%	40%
5	Խորհրդակցական մարմիններ	39%	12,5%	60%
6	Ուսումնական սյան	33%	62,5%	20%
7	Օլիմպիադայի գործընթաց	33%	0%	40%
8	Պաշտոնային	22%	37,5%	20%

	<i>պարտականություններ</i>			
9	<i>Վարչական աշխատողներ</i>	22%	25%	20%

Աղյուսակ 10-ի տվյալներից հետևում է՝

- կանոնադրության անհամապատասխանության բնույթի բոլոր խախտումները բնորոշ են միայն **Երևանի** դպրոցներին. **18** դպրոցներում՝ **100%**,

- մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներն առավելագույնը արձանագրվել են **ՀՀ Արարատի մարզի** ստուգված դպրոցներում. **բոլոր 8 դպրոցներում՝ 100%**,

- սովորողների համակազմի ձևավորման, ներքին գնահատման գործընթացի, ուսումնական պլանի պահանջների, պաշտոնային պարտականությունների կատարման և վարչական աշխատողների ուսումնական բեռնվածության բնույթի խախտումներն առավելագույնն արձանագրվել են **ՀՀ Արարատի մարզի** ստուգված դպրոցներում, համապատասխանաբար՝ **62,5%, 50%, 62,5%, 37,5%, 25%**,

- խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, ինչպես նաև օլիմպիադայի գործընթացի բնույթի խախտումներն առավելագույնն արձանագրվել են **ՀՀ Արմավիրի մարզի** ստուգված դպրոցներում, համապատասխանաբար՝ **60% և 40%**,

- **ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի** ստուգված դպրոցներում չեն արձանագրվել կանոնադրության անհամապատասխանության բնույթի խախտումներ, իսկ **ՀՀ Արարատի մարզի դպրոցներում** նաև՝ օլիմպիադայի գործընթացի խախտումներ:

Հաշվետվությունում արդեն իսկ նշվել է, որ արձանագրված **281** խախտումներից ժամկետանց են համարվել **172-ը**, որոնց գերակշռող մասը՝ ըստ բնույթների, վերաբերել է՝

❖ **մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ 24%-ը** (42 ժամկետանց խախտում),


❖ **ներքին գնահատման գործընթացին և սովորողների համակազմի ձևավորմանը՝ 12-ական տոկոսը** (20-ական),

❖ **ուսուցչի մրցույթի ընթացակարգին՝ 10%-ը** (18),

❖ **ուսումնական պլանի պահանջներին՝ 8%-ը** (14):

Գծապատկեր 7-ում ներկայացվել է ժամկետանց խախտումների տոկոսային հանմամասնությունը.

**Ժամկետանց խախտումների բնույթների տոկոսային համամասնությունը**  
 Գծապատկեր 7



Խախտումների և ժամկետանց խախտումների թվային տվյալների համադրման արդյունքում պարզվել է, որ ուսուցչի մրցույթի ընթացակարգի և օլիմպիադայի գործընթացի բնույթի բոլոր խախտումները համարվել են ժամկետանց (100%), քանի որ գործընթացներն ավարտվել են և խախտման հետևանքները վերացնել հնարավոր չէ:

Ժամկետանց չեն եղել (0%) կանոնադրության, լիցենզիայի առկայության, աշակերտական և ծնողական խորհրդներին վերաբերող բոլոր խախտումները, քանի որ նրանց հետևանքները հնարավոր է վերացնել (տրվել են հանձնարարականներ):

**5. Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների վերաբերյալ (բնույթները)**

Ինչպես արդեն նշվել է՝ 2022 թվականի 1-ին եռամսյակում խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրագրերով ստուգված 31 դպրոցներից 24-ի (77%) տնօրեններին տրվել են 81 հանձնարարականներ, որոնք կազմել են արձանագրված խախտումների 29%-ը:

Հանձնարարականներ չեն տրվել հետևյալ 7 (23%) դպրոցներին. Երևանի հ.հ. 39 հիմնական, 175 միջնակարգ, 83, 105 ավագ, Այգեստանի, Ագավանդի միջնակարգ դպրոցներ, ԱրտՄՏԵՄ վարժարան:

**Առավել հաճախ կրկնվող հանձնարարականների բնույթները**

**❖ Մանկավարժական աշխատողների նշանակում**

Մանկավարժական աշխատողների նշանակման հանձնարարականներ տրվել են 24 դպրոցներից 16-ի (67%) տնօրեններին՝ 29 (36%) հանձնարարական: Հարկ է նշել, որ 29 հանձնարարարականներից 22-ը (76%) վերաբերել են ուսուցչի, իսկ 7-ը (24%)՝ այլ

մանկավարժական աշխատողների նշանակմանը. ԴԱԿ, գրադարանավար, ուսուցչի օգնական:

Մանկավարժական աշխատողների նշանակման հանձնարարարականներ տրվել են Երևանի հ.հ. 6, 7, 18, 26, 78, 128 հիմնական, Լուսառատի, Հայանիստի, Տափերականի, Եղեգնավանի, Հովտաշատի, Արևաբույրի, Այգավանի, Ջրաբքի, Արևաշատի, Ալաշկերտի միջնակարգ դպրոցների տնօրեններին:

**❖ Ուսումնական պլանի պահանջների համապատասխանեցում**

Ուսումնական պլանի պահանջների համապատասխանեցման հանձնարարականներ տրվել են 7 (29%) դպրոցների տնօրեններին՝ 10 (12%) հանձնարարական: Առավել հաճախ կրկնվող հանձնարարականը վերաբերել է առարկայական ծրագրի ժամաքանակի համապատասխանեցմանը. 4 դպրոցներ (57%)՝ 6 (60%) հանձնարարական: Մնացած 4 (40%) հանձնարարականները վերաբերել են առարկայի ուսուցման իրականացմանը, ուսումնական բեռնվածության համապատասխանեցմանը:

Ուսումնական պլանի պահանջների համապատասխանեցման հանձնարարականներ տրվել են Երևանի հ. 26 հիմնական, հ. 54 ավագ, «Էլիտա», Լուսառատի, Տափերականի, Եղեգնավանի և Արևաբույրի միջնակարգ դպրոցներին:

**❖ Սովորողների համակազմի ձևավորում**

Սովորողների համակազմի ձևավորման հանձնարարարականներ տրվել են 6 (25%) դպրոցների տնօրեններին՝ 10 (12%) հանձնարարական, որոնցից 5-ը (50%)՝ վերաբերել է սովորողի ուսուցման լեզվի, 4-ը (40%)՝ սահմանային տեղերի համապատասխանեցմանը և 1-ը կրթության հաջորդականության ապահովմանը:

Վերոնշյալ հանձնարարարականները տրվել են Երևանի հ.հ. 7, 8, 128, 161 հիմնական, Եղեգնավանի, Արևաբույրի միջնակարգ դպրոցներին:

**❖ Խորհրդակցական մարմինների ձևավորում, գործունեության իրականացում**

Խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը (մանկավարժական խորհուրդ, մեթոդական միավորումներ, աշակերտական, ծնողական խորհուրդներ) վերաբերող 18 (22%) հանձնարարականներ տրվել են հետևյալ 7 (29%) դպրոցների տնօրեններին. Երևանի հ.հ. 8, 27, 78, 89 հիմնական, «Էլիտա», Եղեգնավանի, Ալաշկերտի միջնակարգ դպրոցներ:


**❖ Տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարում**

Տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարման հանձնարարականներ տրվել են 7 (29%) դպրոցների՝ 14 (17%) հանձնարարական. Երևանի հ.հ. 8, 128 հիմնական, «Էլիտա», Ռ.Ազարյանի, Եղեգնավանի, Հայկաշենի, Ջրաբքի միջնակարգ դպրոցներ:

Վերոնշյալ հանձնարարականներից են՝ հանրակրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան լիցենզիաների ձեռքբերումը, տնօրենի շաբաթական ծանրաբեռնվածության համապատասխանեցումը, դպրոցի լոգոպեդի պաշտոնային պարտականությունների կատարման ապահովումը, խորհրդի հավանությանը դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող սովորողների կազմի, ներքին գնահատման արդյունքների ներկայացումը, դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակման և ներդրման, ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյանի առկայության ապահովումը, աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու և քաղաքացիական պաշտպանության պլանների հաստատումը, դպրոցի կանոնադրությունում իրականացվող հանրակրթական ծրագրերի և օրենսդրական փոփոխությունների ամրագրումը:

Գծապատկեր 8-ում ներկայացվել են առավել հաճախ կրկնվող հանձնարարականների բնույթներ՝ ըստ դպրոցների և հանձնարարականների տոկոսային համամասնության.



**6. Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների և 1-ին եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքների վերաբերյալ**

2021 թվականի 1-ին եռամսյակը, որպես հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ, սահմանվել է 21 դպրոցների 59 հանձնարարականների համար:


21 դպրոցներից 14-ի (67%) կողմից կատարողականները ներկայացվել են սահմանված ժամկետում, 3-ի (14%) դեպքում՝ սահմանված ժամկետից ուշ, իսկ 4 (19%) դպրոցների դեպքում կատարողականներ չեն ներկայացվել. Երևանի հ. 6, Երևանի հ. 18, Վանաձորի հ. 6 հիմնական և Ալավերդու հ. 9 միջնակարգ դպրոցներ:

Տրված 59 հանձնարարականներից 28-ը վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը, 7-ը՝ ուսումնական պլաններին, 28-ը՝ այլ բնույթի: Այլ

բնույթի հանձնարարականները հիմնականում վերաբերել են լիցենզիայի բացակայությանը, լիցենզիայի սահմանային թվերի գերազանցմանը, համակազմի, աշակերտական խորհրդի ձևավորմանը, առարկայական ծրագրերի կատարման ապահովմանը, սահմանված կարգով հաստատմանը և այլն: Կատարողականների վերաբերյալ գրություններ չեն ստացվել 4 դպրոցներին տրված 6 հանձնարարականների դեպքում:

Ըստ դպրոցներից ստացված կատարողականների՝ 53 հանձնարարականներից կատարվել են 28-ը (53%), կատարվել են մասամբ՝ 20-ը (37%), չեն կատարվել 3-ը (6%), ինչպես նաև 2 (4%) հանձնարարականների կատարման մասին տեղեկատվություն չի ներկայացվել:

Հանձնարարականների և կատարողականների տոկոսային համամասնությունը ներկայացված է գծապատկեր 9-ում:



Հանձնարարականների և ստացված կատարողականների համադրման արդյունքները, ըստ դպրոցների, ներկայացված են Աղյուսակ 11-ում:

*Աղյուսակ 11*

<b>Հանձնարարականների և կատարողականների համադրման արդյունքները ըստ դպրոցների</b>							
N	Դպրոցի անվանումը	Տնօրենին տրված կարգադրագիր			Տնօրենից ստացված կատարողական		
		Կադրեր	Ուսուցիչներ	Այլ	Կադրեր	Ուսուցիչներ	Այլ
1.	Ախթալայի հ. 1 մ/դ	2			2*		
2.	Ջրառատի մ/դ	2	1	3	1+1*	1	2+1*
3.	Վանանդի մ/դ	1		2	1***		2
4.	Սարդարապատի մ/դ	1			1		
5.	Կապանի հ. 13 հ/դ	2			1+1*		

6.	Մեղրիի հ. 1 մ/դ	1			1*		
7.	Վարդենիսի մ/դ	1		9	1***		8+1*
8.	Ստեփանավանի ա/դ	1		1	1		1
9.	Գյումրու հ. 5 հ/դ			1			1
10.	Լեռնաձորի հ/դ	4			4*		
11.	Մեծավանի հ. 2 մ/դ	1			1		
12.	Երևանի երաժշտական թիվ 13 հասուն կ դպրոց	2	3		1*+1**	2+1*	
13.	Երևանի պարարվեստի պետական քոլեջ		1	2		1*	1+1*
14.	Երևանի հ. 26 հ/դ	2	1		1+1*	1	
15.	Երևանի հ. 27 հ/դ			1			1
16.	Երևանի հ. 55 հ/դ	3	1	3	1+2*	1	1*+2**
17.	Երևանի հ. 161 հ/դ			1			1*
Ընդամենը		23	7	23	7+13*+1**+2***	5+2*	16+5*+2**
		53			28+20*+3**+2***		

*\*ընթացքի մեջ, \*\* չի կատարվել, \*\*\*տեղեկատվություն չի ներկայացվել*

Մանկավարժական աշխատողների նշանակմանը վերաբերող 23 (53%) հանձնարարականները տրվել են 17 դպրոցներից 13-ին (76%): 23 հանձնարարականներից կատարվել են 7-ը (30%), ընթացքի մեջ են 13-ը (57%), չի կատարվել 1-ը (4%) և հանձնարարականի կատարման վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել 2 (9%) հանձնարարականների դեպքում: Մանկավարժական աշխատողների նշանակման վերաբերյալ հանձնարարականների կատարումը, ըստ ներկայացված կատարողականի, Ընթացքի մեջ է՝ համարվել հետևյալ դեպքերում.

- անձը ազատվել է աշխատանքից, սակայն թափուր տեղը ներկա պահին համալրված չէ,

- անձը շարունակում է պաշտոնավարել, թափուր տեղի համար պարբերաբար հայտարարվող մրցույթները դեռևս չեն համալրվում:

Մանկավարժական աշխատողների նշանակման 23 հանձնարարականներից ուսուցչի նշանակմանը վերաբերում են 21-ը (91%), որից կատարվել են 6-ը (28%), ընթացքի մեջ են 12-ը (57%), չի կատարվել 1-ը (5%) և հանձնարարականի կատարման վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել 2 (10%) հանձնարարականների դեպքում:

Ուսումնական պլանի համապատասխանեցմանը վերաբերող 7 հանձնարարականները տրվել են 17 դպրոցներից 5-ին (29%): Այդ հանձնարարականներից 5-ը (71%) կատարվել են, իսկ 2-ը (29%)՝ նշվել են ընթացքի մեջ են, քանի որ մեկ հանձնարարականի դեպքում առարկայական ծրագիրը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍՆ հաստատման, իսկ մյուսի դեպքում՝ ուսումնական պլանը համապատասխանեցման փուլում է:

Տնօրենի պաշտոնային պարտականություններին վերաբերող այլ բնույթի 23 հանձնարարականներ տրվել են 17 դպրոցներից 9-ին (53%): Հանձնարարականներից 16-ը (69%) կատարվել են, ընթացքի մեջ են 5-ը (22%) և ևս 2-ը (9%) չեն կատարվել:

Հարկ է նշել, որ չկատարված 3 հանձնարարականներից 2-ը (67%) վերաբերել են ուսումնական պլանին, 1-ը (33%)՝ մանկավարժական աշխատողների նշանակմանը:

Ամենամեծ թվով հանձնարարականները տրվել են ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիսի միջնակարգ դպրոցին՝ 53 հանձնարարականներից 10-ը (19%): Ընթացքի մեջ գտնվող 20 հանձնարարականներում մեծ թիվ են կազմում Երևան քաղաքի (9-ը՝ 45%) և Սյունիքի մարզի (6՝ 30%) դպրոցներին տրված հանձնարարականները, իսկ չկատարված բոլոր 3 (100%) հանձնարարականները Երևան քաղաքի դպրոցներին տրված հանձնարարականներն են:

Կատարողականների համադրման արդյունքում իրականացվել է վերոնշյալ դպրոցների ռիսկերի վերագնահատում՝ համաձայն ՀՀ կառավարության 25.11.2021թ. «Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 1947-Ն որոշման (այսուհետ՝ մեթոդաբանություն) 40-44-րդ կետերի պահանջների:

Որոշ դեպքերում լիազոր մարմինների ղեկավարները տեսչական մարմնի ղեկավարին ուղղած պատասխան գրություններում ներկայացնում են խախտում կատարած դպրոցների տնօրենների բացատրությունները՝ առանց նշելու իրենց դիրքորոշումը, որոշ դեպքերում էլ ուղարկում են նաև՝ իրենց հասցեագրված կատարողականները:

Տեսչական մարմնի ղեկավարի կարգադրագրերը տրվում են դպրոցների տնօրեններին, որտեղ հստակ նշված են, ոչ միայն հանձնարարականի կատարման, այլ նաև՝ **տեսչական մարմնի տեղեկացման** ժամկետները:

Համաձայն մեթոդաբանության 40-րդ և 41-րդ կետերի պահանջների՝ դպրոցի ռիսկը վերագնահատվում է ստուգման արդյունքում տրված հանձնարարականի և դրա կատարման վերաբերյալ **դպրոցի ներկայացրած տեղեկության** համադրման կամ հանձնարարականի կատարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների հիման վրա: Եթե դպրոցում իրականացված ստուգման արդյունքում տեսչական մարմնի ղեկավարի կարգադրագրով տրված հանձնարարականը կատարվել է ամբողջությամբ, ապա ուսումնական հաստատության ռիսկը գնահատվում է **0 միավոր**: Եթե նշված հանձնարարականը կատարվել է մասամբ և սահմանված ժամկետում, ապա ուսումնական հաստատության ռիսկը գնահատվում է **3 միավոր**: Եթե հանձնարարականը կատարվել է մասամբ և սահմանված ժամկետից ուշ՝ **6 միավոր**: Հանձնարարականի կատարման վերաբերյալ **գրություն չներկայացվելու դեպքում** դպրոցի ռիսկը գնահատվում է՝ **8 միավոր**, իսկ **հանձնարարականը չկատարվելու դեպքում**՝ առավելագույնը՝ **10 միավոր**:

**7. Տեղեկատվություն ստուգումների արդյունքում արձանագրված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ**

Ստուգումների արդյունքում արձանագրվել են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև կրթության ոլորտը կարգավորող 10 նորմատիվ իրավական ակտերի 92 պահանջների խախտումներ, որոնք, ըստ դպրոցների, ներկայացվել են Աղյուսակ 12-ում.

*Աղյուսակ 12*

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Դպրոցի անվանումը
<b>«Կրթության մասին» ՀՀ օրենք</b>	
<p><b>14-րդ հոդվածի 2-րդ մաս.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը»:</p>	<p>Երևանի հ. 26 հ/դ, Տափերականի մ/դ</p>
<b>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք</b>	
<p><b>4-րդ հոդվածի 4-րդ մաս.</b> «Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:</p>	<p>Եղեգնավանի մ/դ</p>
<p><b>5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ.</b> «Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին»:</p>	<p>Երևանի հ. 7 հ/դ, Երևանի հ. 27 հ/դ, «Էլիտա» մ/դ, Տափերականի մ/դ, Եղեգնավանի մ/դ, Այգավանի մ/դ</p>
<p><b>7-րդ հոդվածի 6-րդ մաս.</b> «Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը կարող է հաստատել այլընտրանքային հանրակրթական հիմնական, այդ թվում՝ փորձարարական, հեղինակային և միջազգային ծրագրեր, որոնք չեն հակասում հանրակրթության պետական չափորոշիչին»:</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>
<p><b>9-րդ հոդվածի 6-րդ մաս.</b> «Ոչ պետական ուսումնական հաստատության կանոնադրությունը չպետք է հակասի «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն օրենքի դրույթներին»:</p>	<p>«Էլիտա» մ/դ, Ռ. Ագարյանի մ/դ</p>
<p><b>12-րդ հոդվածի 18-րդ մասի 1-ին կետ.</b> «Պետական ուսումնական հաստատության տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության ... արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք»:</p>	<p>Երևանի հ. 83 ա/դ, Հայանիստի մ/դ, Այգեստանի մ/դ, Եղեգնավանի մ/դ, Արևաբույրի մ/դ, Հայկաշենի մ/դ</p>
<p><b>13-րդ հոդվածի 1-ին մաս.</b> «Ուսումնական հաստատությունը հանրակրթական ծրագիր(եր) կարող է իրականացնել համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում...»:</p>	<p>Ռ. Ագարյանի մ/դ, Զրարբիի մ/դ</p>
<p><b>14-րդ հոդվածի 3-րդ մաս.</b> «Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն իր ուսումնական պլանները կազմում է օրինակելի ուսումնական պլանների հիման վրա: Օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը ուսումնական հաստատությունը բաշխում է պետական բաղադրիչով սահմանված կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած առարկաներին»:</p>	<p>Երևանի հ. 27 հ/դ, Երևանի հ. 54 ա/դ, Երևանի հ. 175 հ/դ, «Էլիտա» մ/դ, Լուսառատի մ/դ, Այգեստանի մ/դ, Տափերականի մ/դ, Եղեգնավանի մ/դ, Արգավանդի մ/դ</p>
<p><b>16-րդ հոդվածի 7-րդ մաս.</b> <sup>27</sup> «Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով»:</p>	<p>Այգավանի մ/դ</p>

<p><b>16-րդ հոդվածի 8-րդ մաս.</b> «Ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելը և ազատելը կատարվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած կարգով հետևյալ դեպքերում. 1) ծնողի դիմումի հիման վրա. 2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա»:</p>	<p>Երևանի հ. 78 հ/դ</p>
<p><b>24-րդ հոդվածի 3-րդ մաս.</b> «Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության...»:</p>	<p>Եղեգնավանի մ/դ</p>
<p><b>25-րդ հոդվածի 4-րդ մաս.</b> «Պետական ուսումնական հաստատության կես դրույքով պաշտոնավարող և համապատասխան որակավորում ունեցող պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողը համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև տասնչորս դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն»:</p>	<p>Երևանի հ. 8 հ/դ, Երևանի հ. 39 հ/դ, Եղեգնավանի մ/դ</p>
<p><b>25-րդ հոդվածի 4-րդ մաս.</b> «Պետական ուսումնական հաստատության մեկ դրույքով պաշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև ութ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն»:</p>	<p>Երևանի հ. 83 ա/դ, Երևանի հ. 128 հ/դ, Լուսառատի մ/դ, Ջրաբքի մ/դ</p>
<p><b>34-րդ հոդվածի 2-րդ մաս.</b> «Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատումը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները»:</p>	<p>Երևանի հ. 83 ա/դ, «Էլիտա» մ/դ, Ռ. Ագարյանի մ/դ, ԱրտՄՏԵՄ վարժարան, Հայկաշենի մ/դ,</p>
<p><b>34-րդ հոդվածի 3-րդ մաս.</b> «Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը»:</p>	<p>Երևանի հ. 6 հ/դ, Երևանի հ. 18 հ/դ, Երևանի հ. 27 հ/դ, Երևանի հ. 83 ա/դ, «Էլիտա» մ/դ, Արևարույրի մ/դ, Հայկաշենի մ/դ, Ջրաբքի մ/դ</p>
<b>«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք</b>	
<p><b>9.1. մասի պահանջ.</b> «Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է»:</p>	<p>ԱրտՄՏԵՄ վարժարան</p>
<b>ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրեր»</b>	
<p><b>3-րդ գլխի 1-ին կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու է ուսումնական ծրագրերի կատարման համար»:</p>	<p>Երևանի հ. 26 հ/դ, Երևանի հ. 27 հ/դ, Երևանի հ. 54 ա/դ, Երևանի հ. 175 հ/դ, Տափերականի մ/դ, Լուսառատի մ/դ, Արևարույրի մ/դ</p>
<p><b>3-րդ գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը»:</p>	<p>Երևանի հ. 27 հ/դ</p>
<p><b>3-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական</p>	<p>Երևանի հ. 175 հ/դ</p>

<p>հաստատության ուսումնական աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում» :</p>	
<p><b>3-րդ գլխի 1-ին կետի 4-րդ ենթակետ.</b> «Տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը... 4) կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ»:</p>	<p><b>Տափերականի մ/դ, Հայկաշենի մ/դ</b></p>
<p><b>3-րդ գլխի 1-ին կետի 5-րդ ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝ ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները»:</p>	<p><b>Հայկաշենի մ/դ</b></p>
<p><b>4-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Տնօրենի՝ հանրակրթական ուսումնական հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում »:</p>	<p><b>Երևանի հ. 78 հ/դ</b></p>
<p><b>6-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ»:</p>	<p><b>Երևանի հ. 83 ա/դ, Արևաշատի մ/դ</b></p>
<p><b>7-րդ գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետ.</b>«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ապահովում է կրթական ծրագրերի կատարումը»:</p>	<p><b>Տափերականի մ/դ, Արգավանդի մ/դ, Այգեստանի մ/դ, Երևանի հ. 27 հ/դ</b></p>
<p><b>7-րդ գլխի 1-ին կետի 2.2-րդ ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՌԻՊ-ի, »:</p>	<p><b>Երևանի հ. 27 հ/դ</b></p>
<p><b>8-րդ գլխի 1-ին կետի 7-րդ ենթակետ.</b> «Հատուկ մանկավարժն անցկացնում է դասալսումներ՝ նպատակ ունենալով պարզելու սովորողների ուսումնական գործունեության և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը, յուրաքանչյուրի զարգացման շարժընթացը, ինչպես նաև ապահովելու հատուկ մանկավարժական աշխատանքների շարունակականությունն ու արդյունավետությունը»:</p>	<p><b>«Էլիտա» մ/դ</b></p>
<p><b>8-րդ գլխի 1-ին կետի 9-րդ ենթակետ.</b> «Հատուկ մանկավարժ-լոգոպեդը հետազոտում և գնահատում է սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, բացահայտում է խոսքի թերությունների բնույթը և արտահայտման աստիճանը, պարապմունքների համար խմբերը կոմպլեկտավորելիս՝ հաշվի է առնում սովորողների խոսքի խանգարման բնույթը»:</p>	<p><b>«Էլիտա» մ/դ</b></p>
<p><b>11-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության գինդեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն, սպայական կոչում)»:</p>	<p><b>Երևանի հ. 7 հ/դ, Այգավանի մ/դ</b></p>
<p><b>12-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> « Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է</p>	<p><b>Երևանի հ. 128 հ/դ, Երևանի հ. 161 հ/դ,</b></p>

<p>ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում գրադարանային կամ մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ»:</p>	<p><b>Լուսառատի մ/դ</b></p>
<p><b>14-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ»:</p>	<p><b>Երևանի հ. 26 հ/դ, Երևանի հ. 128 հ/դ, Լուսառատի մ/դ</b></p>
<p><b>ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն» (Հավելված 3)</b></p>	
<p><b>24-րդ կետ.</b> «Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշիչն և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան»:</p>	<p><b>Ջրարբիի մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները ...»:</p>	<p><b>Երևանի հ. 83 ա/դ, Հայանիստի մ/դ, Այգեստանի մ/դ, Եղեգնավանի մ/դ, Արևաբույրի մ/դ, Հայկաշենի մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը ... կազմում է դպրոցի տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն ու ...»:</p>	<p><b>«Էլիտա» մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 3-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը»:</p>	<p><b>Երևանի հ. 8 հ/դ, Եղեգնավանի մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 5-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ հաստատում է ... տնօրենի տեղակալների ու մանկավարժների հաշվետվությունները»:</p>	<p><b>«Էլիտա» մ/դ, Հայկաշենի մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 7-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը»:</p>	<p><b>Արևաբույրի մ/դ, Հայկաշենի մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 8-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը՝ համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ ... իրականացնում է ... մանկավարժական և այլ կադրերի... ընտրությունը ...»</p>	<p><b>Երևանի հ. 6 հ/դ, Երևանի հ. 7 հ/դ, Երևանի հ. 8 հ/դ, Երևանի հ. 18 հ/դ, Երևանի հ. 26 հ/դ, Երևանի հ. 78 հ/դ, Երևանի հ. 83 ա/դ, Երևանի հ. 128 հ/դ, Երևանի հ. 161 հ/դ, Երևանի հ. 175 հ/դ, Ռ. Ագարայանի մ/դ, Լուսառատի մ/դ, Հայանիստի մ/դ, Այգեստանի մ/դ, Տափերականի մ/դ,</b></p>

	<p>Հովտաշատի մ/դ,  Եղեգնավանի մ/դ,  Արևաբույրի մ/դ,  Այգավանի մ/դ,  Ալաշկերտի մ/դ,  Արևաշատի մ/դ,  Զրարբիի մ/դ</p>
<p><b>48-րդ կետի 12-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենն ուսումնական պլանին համապատասխան ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար»:</p>	<p>Երևանի հ. 54 ա/դ,  Երևանի հ. 26 հ/դ,  Երևանի հ. 27 հ/դ,  Երևանի հ.78 հ/դ,  Երևանի հ. 175 հ/դ,  «Էլիտա» մ/դ,  Լուսառատի մ/դ,  Այգեստանի մ/դ,  Տափերականի մ/դ,  Եղեգնավանի մ/դ,  Արևաբույրի մ/դ,  Արգավանդի մ/դ</p>
<p><b>48-րդ կետի 13-րդ ենթակետ.</b> « օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման, ... համար»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>48-րդ կետի 17-րդ ենթակետ.</b>«Դպրոցի տնօրենը ապահովում է դպրոցում գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը»:</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>
<p><b>48-րդ կետի 18-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը»:</p>	<p>Երևանի հ. 7 հ/դ,  Երևանի հ. 8 հ/դ,  Երևանի հ. 18 հ/դ,  Երևանի հ. 27 հ/դ,  Երևանի հ. 83 ա/դ,  Երևանի հ. 128 հ/դ,  Երևանի հ. 161 հ/դ,  «Էլիտա» մ/դ ՄՊԸ,  Տափերականի մ/դ,  Եղեգնավանի մ/դ,  Այգավանի մ/դ,  Արևաշատի մ/դ,  Արգավանդի մ/դ,  Արևաբույրի մ/դ</p>
<p><b>74-րդ կետի 7-րդ ենթակետ.</b>«Դասարանի ղեկավարը, իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝ դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը»:</p>	<p>Լուսառատի մ/դ</p>
<p><b>75-րդ կետ.</b> «Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, ջրօանավարտների) մարմիններ»:</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>
<p><b>76-րդ կետ.</b> «Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում»:</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>

<p><b>77-րդ կետ.</b> «Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները»:</p>	<p>Ալաշկերտի մ/դ</p>
<p><b>79-րդ կետի 4-րդ ենթակետ.</b> «Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝ ... ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման, ինպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը. 6) դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը»:</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>
<p><b>79-րդ կետի 6-րդ ենթակետ.</b> «Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝ ... դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը»:</p>	<p>«Էլիտա» մ/դ, Ալաշկերտի մ/դ</p>
<p><b>80-րդ կետի 4-րդ ենթակետ.</b> «Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝ ... ավագ դպրոցի փոխադրական դասարաններում տարեվերջյան քննություններ սահմանելու մասին»:</p>	<p>Երևանի 83 ա/դ</p>
<p><b>80-րդ կետի 7-րդ ենթակետ.</b> «Ռավորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշիչ և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի»:</p>	<p>Ջրարբիի մ/դ</p>
<p><b>83-րդ կետ.</b> «Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր...»</p>	<p>Երևանի 83 ա/դ, «Էլիտա» մ/դ</p>
<p><b>88-րդ կետ.</b> «Մանկավարժական խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, իսկ խորհրդի անդամների ընտրության ժամանակ՝ առնվազն 2/3-ը»:</p>	<p>Երևանի հ. 8 հ/դ</p>
<p><b>89-րդ կետ.</b> «Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է»:</p>	<p>Երևանի 78 հ/դ, Եղեգնավանի մ/դ</p>
<p><b>91-րդ կետ.</b> «Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>92-րդ կետ.</b> «Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում»:</p>	<p>Հայկաշենի մ/դ, Ալաշկերտի մ/դ</p>
<p><b>93-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>

<p><b>93-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը»:</p>	<p>Երևանի հ.8 հ/դ, Ալաշկերտի մ/դ</p>
<p><b>93-րդ կետի 3-րդ ենթակետ.</b> «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>93-րդ կետի 6-րդ ենթակետ.</b> «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>93-րդ կետի 7-րդ ենթակետ.</b> «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>93-րդ կետի 9-րդ ենթակետ.</b> «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ ... մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն»:</p>	<p>Երևանի հ.6 հ/դ, «Էլիտա» մ/դ, Ալաշկերտի մ/դ, Հայկաշենի մ/դ</p>
<p><b>93-րդ կետի 10-րդ ենթակետ.</b> «Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին»:</p>	<p>«Էլիտա» մ/դ, Ալաշկերտի մ/դ, Հայկաշենի մ/դ</p>
<p><b>93-րդ կետի 11-րդ ենթակետ.</b> «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 11) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>95-րդ կետ.</b> «Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ»:</p>	<p>Երևանի հ. 89 հ/դ, Հայկաշենի մ/դ</p>
<p><b>97-րդ կետ.</b> «Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է»:</p>	<p>«Էլիտա» մ/դ, Եղեգնավանի մ/դ</p>
<p><b>107-րդ կետ.</b> «Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ... սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ»:</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>
<p><b>ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 4-ի № 633 որոշմամբ հաստատված «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգ»</b></p>	
<p><b>6-րդ կետի «բ» ենթակետ.</b> «Քաղաքացիական պաշտպանության պլանի մշակման աշխատանքները կազմակերպում, ղեկավարում և մշակված պլանը համաձայնեցնելուց հետո հաստատում է կազմակերպության ղեկավարը»:</p>	<p>Ռ. Ազարյանի մ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի № 396-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչ թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ»</b></p>	
<p><b>3-րդ կետ.</b> «Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող մինչև մեկ դրույթ ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցիչին»:</p>	<p>Երևանի հ. 7 հ/դ</p>

<p><b>5-րդ կետ.</b> «Անկախ պատճառներից մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը: Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում»:</p>	<p>Երևանի հ. 78 հ/դ</p>
<p><b>6-րդ կետ.</b> «Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթ կայանալու, թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցութի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից) որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք»:</p>	<p>Հայանիստի մ/դ, Այգեստանի մ/դ, Տափերականի մ/դ, Հովտաշատի մ/դ, Ալաշկերտի մ/դ, Արևաշատի մ/դ, Զրարբի մ/դ</p>
<p><b>9-րդ կետի 3-րդ ենթակետ.</b> «Առաջացած ժամերը տնօրինվել են սույն կարգի 3-րդ կետի՝ «Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող մինչև մեկ դրույթ ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցիչին»:</p>	<p>Երևանի հ. 7 հ/դ</p>
<p><b>15-րդ կետ.</b> «Մրցութին կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը»:</p>	<p>Տափերականի մ/դ</p>
<p><b>20-րդ կետ.</b> «Մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվում է մրցութի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ, անվանական կազմը հաստատում է հաստատության տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>22-րդ կետ.</b> «Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար), տնօրենի ուսումնական գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ»:</p>	<p>Հայանիստի մ/դ Երևանի հ. 83 ա/դ</p>
<p><b>25-րդ կետ.</b> «Հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են քարտուղարի կողմից, որը հանձնաժողովի անդամներից մեկն է, առանձին մատյանում և պահպանվում են դպրոցում»:</p>	<p>Հայկաշենի մ/դ</p>
<p><b>27-րդ կետ.</b> «Հանձնաժողովը, մրցութի անցկացման օրը հրավիրված նիստում, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ընդունում է մրցութին մասնակցելու թույլտվություն տալու կամ մերժելու մասին որոշում և հաստատում է մրցութի մասնակիցների անվանացանկը»:</p>	<p>Երևանի հ. 6 հ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 03.05.2012 թ. N 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, անփութիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ»</b></p>	
<p><b>4-րդ կետ.</b> «Առանձին գործող ավագ դպրոցների 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան փոխադրական քննությունների միջոցով...»</p>	<p>Երևանի հ. 83 ա/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ»</b></p>	
<p><b>10-րդ կետ.</b> «Սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա»:</p>	<p>Տափերականի մ/դ</p>
<p><b>14-րդ կետ.</b> «Տնօրենը, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, եռամսյակը մեկ անգամ, յիստոր մարմին է ներկայացնում դպրոց</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>

<p>տեղափոխված սովորողների անվանացանկը՝ նշելով դասարանը և այն դպրոցի անվանումը, որտեղ սովորողը հաճախել է: Ոչ պետական դպրոցի դեպքում տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:</p>	
<p><b>16-րդ կետ.</b> «Սովորողի ազատույնը դպրոցից կատարվում է՝ 1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա, 2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա»:</p>	<p>Երևանի հ. 78 հ/դ</p>
<p><b>20-րդ կետ</b> «...10-րդ կետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ: Մասնագիտական եզրակացությունը տրվում է սովորողի՝ ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր (դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան՝ տվյալ առարկային) ստուգման արդյունքում: Հիմք ընդունելով մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդափափորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպվում է ուսուցում՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար»:</p>	<p>Երևանի հ. 18 հ/դ, Երևանի հ. 78 հ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունիսի 20-ի N 54-Ն հրամանով հաստատված Ունենակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները՝ Հավելված</b></p>	
<p><b>1-ին գլխի 10-րդ կետի պահանջ.</b> Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:</p>	<p>«Էլիտա» մ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի մայիսի 17-ի N 571-Ն հրամանով հաստատված ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրություն</b></p>	
<p><b>6-րդ գլխի 27-րդ կետ.</b> «Աշակերտական խորհուրդը ձևավորվում է հաստատության 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների դասարանական ժողովներում»:</p>	<p>Երևանի հ.27 հ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 05-ի N 280-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգ»</b></p>	
<p><b>1-ին գլխի 5-րդ կետ.</b> «Օլիմպիադաները անցկացվում են ..հանրակրթական առարկաներից՝ աշխարհագրություն, ..ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, օլիմպիադան անց է կացվում 3 փուլով՝ համաձայն նախարարության սահմանած ընթացակարգերի՝ դպրոցական փուլ. »:</p>	<p>Երևանի հ. 18 հ/դ, Արևաշատի մ/դ</p>
<p><b>4-րդ գլխի 3-րդ կետ.</b> «Օլիմպիադաները նախապատրաստելու և անցկացնելու նպատակով ստեղծվում են հանրապետական, մարզային, տարածքային, <b>դպրոցական</b> օլիմպիական կազմկումիտեներ, դպրոցական կազմկումիտեի ... կազմը հաստատում է տնօրենը»:</p>	<p>Երևանի 105 ա/դ, «Էլիտա» մ/դ, Ռ. Ազարյանի մ/դ, ԱրտՄՏԵՄ վարժարան, Հայկաշենի մ/դ</p>

<b>12-րդ գլխի 1-ին կետ.</b> «Դպրոցական կազմկոմիտեն սահմանում է դպրոցական փուլի անցկացման ժամկետները՝ ըստ առարկաների»:	Երևանի 105 ա/դ, Հայկաշենի մ/դ
<b>12-րդ գլխի 2-րդ կետ.</b> «Դպրոցական կազմկոմիտեն նախապատրաստում է դպրոցական փուլի կազմակերպումը՝ համաձայն սահմանված ընթացակարգի»:	Երևանի 105 ա/դ, Հայկաշենի մ/դ
<b>12-րդ գլխի 3-րդ կետ.</b> «Դպրոցական կազմկոմիտեի գործառույթները. առարկայական հանձնաժողովների երաշխավորության հիման վրա դպրոցական փուլի հաղթողներին ներկայացնում է մասնակցելու տարածքային փուլին»:	Երևանի 105 ա/դ, Հայկաշենի մ/դ
<b>12-րդ գլխի 4-րդ կետ.</b> «Դպրոցական կազմկոմիտեն վերահսկում է օլիմպիադաների անցկացումը»:	Երևանի 105 ա/դ, Հայկաշենի մ/դ
<b>13-րդ գլխի 1-ին, 2-րդ կետեր.</b> «Դպրոցական առարկայական հանձնաժողովներ դպրոցական կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում տարածքային փուլին մասնակցող թիմերի կազմի մասին»:	Հայկաշենի մ/դ
<b>13-րդ գլխի 3-րդ կետ.</b> «Դպրոցական առարկայական հանձնաժողովների գործառույթները. դպրոցական կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում տարածքային փուլին մասնակցող թիմերի կազմի մասին»:	Երևանի հ. 105 ա/դ
<b>14-րդ գլխի 1-ին կետ.</b> «...Դպրոցական փուլը կազմակերպվում է դպրոցներում ղեկավարներ-հունվար ամիսներին...»:	Երևանի հ. 18 հ/դ, Երևանի հ. 27 հ/դ
<b>ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի հունվարի 18-ի N 23-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկ</b>	
<b>12-րդ կետ.</b> «Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան»	«Էլիտա» մ/դ

## 8. Ամփոփում

Հաշվետվությունում ներկայացվել են ընդհանուր տեղեկություններ ստուգումների վերաբերյալ, ստուգումների արդյունքները՝ ըստ ստուգաթերթերի, խախտումների բնույթները՝ ըստ ստուգումների արդյունքում կազմված ակտերի և լիազոր մարմինների ղեկավարներին ներկայացված խնդիրների, առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները և բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ստուգված դպրոցների, ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների, ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների և 1-ին

եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքների, տեղեկատվություն ստուգումների արդյունքում արձանագրված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ:

Հաշվետվությունում ներկայացված վերլուծությունից հետևում է, որ **գերակա խնդիրը շարունակում է մնալ** մանկավարժական աշխատողների, հիմնականում՝ ուսուցիչների, սահմանված կարգի խախտումով նշանակումը:

Հարկ է նշել, որ ՀՀ ԿԳՄՄ նախարարի 2021 թվականի փետրվարի 18-ի « Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-N հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 22-Ն հրամանով հաստատված հավելվածով ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգում կատարվեցին մի շարք փոփոխություններ. **6-րդ կետի պահանջն** առ այն, որ մինչև մրցույթ ... որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով աշխատանքի կարող է ընդունվել **համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձը**, փոփոխվեց **7-րդ կետի նոր պահանջով**, համաձայն որի աշխատանքի կարող է ընդունվել **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը**. *«Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ»:*

Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունն ուժի մեջ է մտել 2021 թվականի ապրիլի 21-ից, և ինչպես ակնկալվում էր՝ մինչև ուսուցչի թափուր պաշտոնը համալրվելը կատարված նշանակման խախտումները նվազել են, մասնավորապես.

2022 թվականի 1-ին եռամսյակի ստուգման արդյունքում, ինչպես արդեն նշվել է, մինչև ուսուցչի թափուր տեղը մրցութային կարգով համալրվելը արձանագրվել էր ուսուցչի նշանակման **25** խախտում, որոնցից **12-ն (48%)** են արձանագրվել վերը նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո: Հարկ է նշել, որ խախտումներից 3-ը վերաբերել են «ՆԶՊ» առարկայի ուսուցչի նշանակմանը, 1 խախտումը՝ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձին, 2-ը՝ ուսանողներին, հետևաբար օրենսդրական փոփոխություններից հետո մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի պահանջը բարձրագույն կրթության առկայության դեպքում չի բավարարել **6** խախտումների դեպքում, որը կազմել է խախտումների ընդամենը **24%-ը**:

2022 թվականի փետրվարի 2-ին **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը** փոփոխվեց հետևյալ խմբագրությամբ. *«Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում **տվյալ առարկայի** մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ»* (ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 3-ից):

Հետագա ստուգումների արդյունքները ցույց կտան, թե որքանով կլուծվի ուսուցիչների նշանակման (փոխարինող, մինչև մրցույթը կայանալը, մրցույթի

արդյունքում հաղթող, առանց մրցույթի նշանակված մասնագետ) **գերակա խնդիրը**, քանի որ առկա խախտումների վերլուծությունից կարելի է ենթադրել, որ խախտումները կսկսեն աճել:

Ինչ վերաբերում է լիցենզիայով սահմանված սովորողների սահմանային տեղերի գերազանցմանը վերաբերող խախտումներին, ապա կարելի է ակնկալել, որ նշված խախտումները աստիճանաբար կնվազեն, քանի որ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի փետրվարի 17-ի «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ» N 07-Ն հրամանով հաստատված հավելվածի **5-րդ և 8-րդ կետերի պահանջների՝** բոլոր այն բնակավայրերում, որտեղ դպրոցը համարվում է տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական դպրոցը, կամ տվյալ համայնքում գործող պետական դպրոցում տվյալ կրթական աստիճանի համար լիցենզիայով տրված բոլոր տեղերը զբաղված են, սովորողի ընդունելությունը դպրոց իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից, ներառյալ՝ ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունելությունը (ուժի մեջ է մտել 2022 թվականի փետրվարի 23-ից):

Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումները հետազայում կանխելու, ինչպես նաև խախտումների հետևանքները վերացնելու նպատակով **առաջարկվել է.**

**Տնօրեններին.** սահմանել պատշաճ վերահսկողություն դպրոցի կրթական գործընթացի կազմակերպման, վարչական և մանկավարժական աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, մանկավարժական աշխատողների նշանակումն իրականացնել համաձայն պաշտոնների նկարագրերի, սահմանված կարգով անցկացնել ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, ձևավորել դպրոցի սովորողների համակազմը և այլն:

**Լիազոր մարմնին.** ապահովել դպրոցի կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների ամրագրումը և սահմանված կարգով հաստատումը, սահմանել վերահսկողություն դպրոցների կողմից կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի պահանջների կատարման, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման նկատմամբ:

**Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն**

